№ 31 ՈՒՐԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 8 1908 ՈՒՐԲԱԹ ՓԵՏՐՎԱՐԻ 8 № 31

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

12 ամսվայ համար	"	"			10 ր.
11	"	"	"	"	"
10	"	"	"	"	9 ր.
9	"	"	"	"	8 ր.
8	"	"	"	"	7 ր.
7	"	"	"	"	6 ր.
6	"	"	"	"	"
Մնացած ամիսները ամսական ՄԷԿ րուբլի					
Ամերիկա տարեկան		"			6 դօլլար
Եւրօպա	"	"	"		30 ֆրանկ
Պարսկաստան		"	"		10 րուբլի

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԷՏԸ

—

Ո՞վ է սպանել Արփիար Արփիարեանին՝ մեզ դեռ յայտնի չէ։

Արդեօք այն մարդիկը և խմբերն են եղել նրա կեանքին վերջ տուողները, որոնք տարիներ շարունակ հետամուտ էին լինում լռեցնելու անցած դէպքերի այդ կենդանի վկային, թէ դրանք նոր թշնամիներ են, նոր հանգամանքների ազդեցութեան տակ առաջ եկած անհատներ—մենք չը գիտենք։

Այդ կը պարզվի անշուշտ։

Որքան էլ սակայն հետաքրքրական լինի ինքնըստինքեան այդ հարցը, այնուամենայնիւ մեզնից իւրաքանչիւրը ներկայումս այդ հարցի վրա չէ ծանրանում, այլ ոճրագործութեան երևոյթի, երբ հասարակական կամ կենսական խնդիրներ լուծելու մի անբարոյական և ստոր եղանակի գործադրութեան վրա։

Մեր առաջ դրված է գրական, հասարակական գործողի հետ սպանութեան միջոցով հաշիւ տեսնելու խնդիրը։

Մենք չէինք կարող հաշտվել սոսկալի իրողութեան հետ ըստ էութեան և բնաւորութեան։

Եւ չը հաշտվեցինք։

Մենք չէինք կարող չը բողոքել քստմնելի ոճրագործութեան դէմ։

Եւ մեր կողմից բողոքեցինք։

Յիշեցէք և ուրիշ այդ տեսակ դէպքեր, որոնց օրինակները անցան նորերս մեր առաջ, որոնց նմանները արձանագրված են և անցեալում։

Մենք չը հաշտվեցինք նոյնպէս վրաց բանաստեղծ Ճավճավաձէի սպանութեան փաստի հետ։ Եւ խայտառակ գործը մնաց դատապարտելի։

Ոչ ոք չէր կարող հաշտվել գիտնական Հերցենշտէյնի և գրական գործող Իօլլօսի սպանութեան սոսկալի փաստերի հետ։

Ռուս հասարակութիւնը մինչև այժմ չէ կարողանում հաշտվել իր բանաստեղծներ Պուշկինի և Լերմոնտովի անակնկալ վախճանի դէպքերի հետ, որոնց շարժառիթը պատւի խնդրի լուծման միջնադարեան եղանակն է եղել մենամարտի միջոցով։

Մեր գիտակցութիւնը չէ հաշտվում գրական համեստ թղթակից Մուշեղ Տէր-Օհանեանի մահվան հետ։

Մենք կարող էինք դարձեալ բերել օրինակներ, բայց բաւականանում ենք առաջ բերածներով։

Ի՞նչ են ցոյց տալիս դրանք։

Միայն մի բան, որ գրողի, հրապարակախօսի, բանաստեղծի, գիտնականի կեանքին վերջ է տուել գնդակը, այդպէս իր հաշիւը տեսնելով գրչի և մտքի զինուորների դէմ։

Թէ ինչ թերութիւններ են ունեցել յիշեալ անձերը իրանց հայեացքների և գրուածքների մէջ—դա չէ այն խնդիրը, որ առաջ է գալիս սպանված գրողի գերեզմանի առաջ, այլ այդ գործողի դէմ հնարած մաքառման քստմնելի ստոր եղանակի խնդիրը։

Գուցէ Հերցենշտէյնը, Իօլլօսը, Ճավճավաձէն, Պուշկինը, Լերմոնտովը, Արփիարեանը ունեն գրուածքներ, որոնց հետ մենք համաձայն չենք, հայեացքներ, որոնց մենք նոյնիսկ հակառակ ենք, բայց այդ անհամաձայնութիւնը և հայեացքների տարբերութիւնը չը պէտք է հանդէս գան թուլացնելու այն սոսկալի տպաւորութիւնը, որ թողել և թողնում է գրական և հասարակական գործողի սպանութեան փաստը։

Մենք բողոքել ենք և բողոքում ենք գնդակով, սրով և առհասարակ բռնութեամբ հաշիւ տեսնելը գրականագէտի, գիտնականի, հրապարակախօսի, բանաստեղծի և առհասարակ խաղաղ քաղաքացու հետ։

Միթէ ներկայումս մտերմական և բարեկամական յարաբերութիւնների մէջ են մեր գրական և հասարակական գործողները։

Ամենն էլ գիտեն, որ ոչ։

Բայց միթէ կարելի է այնքան վայրենանալ, որ կարելի համարվի բանակռիւների լուծումը սպանութիւններով։

Եւ միթէ, երբ այդպիսի քստմնելի դժբաղդութիւն հանդէս գայ մեր առաջ, ներելի է, որ մարդիկ, փոխանակ կենտրոնանալու բողոքի և զայրոյթի արտայայտութեան վրա ոճրագործութեան դէմ, ախորժակ ունենան կողմնակի հաշիւներ մաքրելու իրանց հակառակորդների հետ։

Մերկ փաստը դրված է մեր առաջ։

Գրական-հասարակական մարդուն լռեցրել են գնդակով։ Գրչի, մտքի դէմ հանդէս է բերված սպանութիւնը։

Այստեղ ուրիշ առարկութիւններ—քննադատութիւններ չեն, այլ մեղմ խօսքով «բծախնդրութիւններ»։

Միթէ դա հասկանալի չէ։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Երէկ ստացանք հետևեալ հեռագիրը Էջմիածնից, որ ուղարկված է ժամը 11 և 8 րօպէին, փետրվ. 7-ից.

Վախճանվեց սինօդի անդամ Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեանը։

—

Երէկ ստացանք Ալէքսանդրօպօլից հետևեալ հեռագիրը.

Արտիկի և Խօրօմի շրջանային գործակալները պաշտօնապէս հաղորդում են, որ Փօքր-Բէկանտ և Ալի-Ղարաքիլիսա գիւղերում մօտ 350 հոգի գտնվում են առանց մի կտոր հացի։

Խլի-Ղարաքիլիսայում մինչև անգամ երկու ընտանիքի հայրեր իբրև թէ կամեցել են ինքնասպանութիւն գործել՝ չը կարողանալով տանել իւրայինների տանջանքները։

Մասնաւոր տեղեկութիւնների համաձայն, հացի կարիք է զգացվում և միւս գիւղերում։

Անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն։

Այդ մասին ես հաղորդել եմ տեղական գաւառապետին։

Ըստ իս՝ հարկաւոր է կազմել մի կօմիսիա գաւառի կարիքի չափը որոշելու համար։

Ալէքսանդրօպօլի յաջորդ՝
Մատթէոս վարդապետ

—

Կարս, 4 փետրվարի

Փետրվարի 2-ի մրրիկի ժամանակ Կարս-Արդահան խճուղու վրա սառեցին մի մարդ և հինգ ձի։

—

Պետերբուրգ, 6 փետրվարի

Գանձակի նահանգի պատգամաւոր Խասմամեդովը Դումայի երեսուն անդամների ստորագրութեամբ մի առաջարկութիւն մտցրեց՝ դաւանութեան մասնաժողովի կազմը երկու մահմեդականներով ևս լրացնելու մասին։ Այս առաջարկութիւնը մերժվեց հոկտեմբերեանների և աջակողմեանների ձայներով։

Ուրբաթ օրը Դումայում կը քննվի Կովկասի զեմստվային նախահաշիւը։ Հոկտեմբերեանները մտադրութիւն ունեն մի բանաձև առաջարկել հերթական գործերին անցնելու, ցանկութիւն յայտնելով, որ Կովկասում շուտով զեմստվային հաստատութիւններ մըտցվեն։

—

Բանանց, 28 փետրվարի

Յունվարի 28-ին մի քանի չարագործներ մտել են Բանանց գիւղից մօտ 2 վերստ հեռաւորութեան վրա գտնվող ս. Թարգմանչաց վանքը, կտրել տարել են մի թանգագին և մի հասարակ վարագոյր, սրբապղծելով եկեղեցու բեմը... Օգտվելով ծերունի պահապանի բացակայութիւնից՝ տարել են վանքի մօտ 50 պուդ սերմացու գետնախնձորը և մի քանի արժէքաւոր իրեր։ Գողութեան կասկածն ընկնում է յայտնի փախստական և արիւնարբու Սօյուն Մամէդ Հիւսէյն-օղլու վրա, որը նախածանօթ է այս վայրին։ Հետքը տարել Թուրքաց Մօլլահասան գիւղը, ուր ձմեռ ժամանակ ապրում է նամարդ և անհանգիստ աւազակը։

Գիւղական տանուտէրը պատշաճաւոր արձանագրութիւն կազմելով՝ զեկուցեց գաւառական պրիստաւին։

Մի քանի օր առաջ գիւղական վաքիլները կազմեցին այն աղքատների անուանացուցակը, որոնք կարօտ են կառավարութեան նպաստների։

Սագան

—

Մարաղա, 25 յունվարի

Ֆարման-Ֆարման հրամայեց տեղիս կառավարչին, որպէսզի Մարաղայում ձերբակալված այն քիւրդ վաճառականներին, որոնց մասին գրել եմ ձեզ դեկտ. 30-ին («Մշակ» № 18) և որոնց տեղիս կառավարութիւնը պահել էր որպէս պատանդ, ապահով կերպով հասցնեն Սօվուջ-Բուլաղ, որովհետև նրանց պահելով կարող են քիւրդերը գրգռվել և բարդութիւններ առաջ բերել։

Ֆարման-Ֆարման յունվարի 19-ին յետ նահանջեց դէպի Միանդաբ, Սօվուջ-Բուլաղը թողնելով Ֆէրիկ-փաշային։

Բոլոր այն պաշտօնեաները, որոնք ծառայում էին վիճելի շրջանի պօստային, հեռագրական և մաքսային հաստատութիւնների մէջ, հասել են Մարաղա։

Սօվուջ-Բուլաղի նախկին դատաւոր Սամադ-խան սարդարը կանչված է Թէհրան, բացատրութիւն տալու համար թէ ինչու քիւրդերի հէնց առաջին յարձակումից վախենալով թողեց Սօվուջ-Բուլաղը և փախաւ Միանդաբ։

Ամանոր

—

Երևան.—Մի գաղտնի բնակարանում ոստիկանութիւնը գտաւ շատ հրազէն և սառը զէնքեր, պայթուցիկ նիւթեր և զանազան վարչութիւնների պաշտօնական զգեստներ։ Ձերբակալված են երկու ուսանող և մի գիմնազիստ։

—

Բագու.—Քաղաքի կենտրոնում մահացու կերպով վիրաւորվեց Տէր-Յակոբեանի կառավարիչ Լիպմանը։

Բագուի նաւթային ընկերութեան գործադուլը վերջացաւ։ Աշխատանքները վերսկսվեցին հին պայմաններով։

—

Պետերբուրգ, 5 փետրվարի

Հոկտեմբերեանները պատրաստվում են Դումա մտցնել մի հարցապնդում թիւրքական գործերի մասին։

Լօնդօնից ստացված հեռագիրները հաստատում են, որ Թիւրքիան գտնվում է պատերազմական լիակատար սպառազինութեան մէջ։

Պետական Դումայի ձախակողմեան ֆրակցիաները որոշեցին այսօրվայ դռնփակ նիստում բուէարկել Շմիդին Պետական Դումայի անդամների թւից դուրս հանելու համար։ Աջակողմեանները և հոկտեմբերեանները տատանվում են։

Կիևի ռուս ժողովրդի միութեան և «Կիեվլյանին» թերթի խմբագիր Իւզեֆովիչի մատնութիւնների համաձայն, Պետերբուրգ է կանչված՝ Կիևի ջարդի գործի առիթով արդարադատութեան մինիստրին բացատրութիւն տալու համար՝ Կիևի դատաստանական պալատի դատախազը։

Մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինը զինուորական նուագածուներին արգելեց մասնակցել «հայրենասիրական» ցոյցերին։ („Каспій“)

—

Լօնդօն.—«Դէյլի Տելեգրաֆը» քննելով Բալկանեան թերակղզում տիրող դրութիւնը, նրան շատ լուրջ է համարում։ Պատերազմ չի սկսվի վաղը,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան գործունէութեան, սկսած 1881 թ. մինչև այսօր՝ 1908 թ. փետրվարի 2-ը

(Զեկուցումն Հ. Առաքելեանի, կարդացված Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան 1908 թ. փետրվ. 2-ին կայացած արտակարգ ընդհանուր ժողովում)

II*)

Երևի, բժիշկ Նաւասարդեանի և Գ. Արծրունու յօդուածները ազդեցին, որովհետև մենք կարդում ենք «Մշակի» 1881 թ. առաջին համարի մէջ, որ յունվարի 4-ին Արծրունու թատրօնում ժողով է գումարվել, «Հայոց բարեգործական ընկերութիւն» անունով մի ընկերութեան կանօնադրութեան ծրագիրը քննելու համար, և այդ ժողովում, որի նախագահն եղել է Բ. Նաւասարդեանը, Գր. Արծրունին տարել է մի փառաւոր յաղթանակ—այն ժամանակվայ համար, յիրաւի որ, յաղթանակ—այն է, որ ժողովը ընդունել նրա առաջարկը՝ աւելացնել կանօնադրութեան խօսքերին թէ «ընկերութիւնը նպատակ ունի նպաստել լուսաւորութեան տարածմանը հայերի մէջ» հետևեալ խօսքերը՝ «առանց դաւանութիւնների խտրութեան»։

Այդ նոյն համարում Գր. Արծրունին գրում է. «Ժողովին նախագահում էր բժ. Բ. Նաւասարդեանց, որ ընկերութեան գլխաւոր հիմնադիրներից մէկը, կամ կանօնադրութեան մշակողներից գլխաւորն է։ Ինչպէս երևում է, հայոց բարեգործական, մարդասիրական և այլ այդ տեսակ ընկերութիւններին վիճակված է հիմնված լինել բժիշկների ձեռքով», կամենալով ասել, որ Բագուի մարդ. ընկ. ևս հիմնված է բժիշկ Ռօստոմեանցի ձեռքով։ Պէտք է ասել սակայն, որ մի քիչ յետոյ Գ. Արծրունին հուր և շանթ տեղաց նոյն Բ. Նաւասարդեանի գլխին, որ նա թոյլ տուեց յաջորդ՝ յունվարի 25-ի ժողովում դուրս ձգել «առանց դաւանութիւնների խտրութեան» պարբերութիւնը, թէև Նաւասարդեան բացատրեց, որ այդ խօսքերը, իսկապէս, աւելորդ էին։

Ես դիտմամբ առաջ բերեցի այս բոլորը ցոյց տալու համար, թէ այդ ժամանակվայ հայ առաջաւոր ինտելիգենցիան ձգտում էր հիմնել ոչ թէ մի զուտ բարեգործական ընկերութիւն Ռուսաստանի կամ Կովկասի հայերի համար, այլ մի ընդհանուր ազգային լուսաւորական եւ կուլտուրական կազմակերպութիւն գլխաւորապէս Հայաստանի ոչ միայն հայ, այլ նոյնիսկ օտար ազգաբնակութեան տնտեսական, մտաւոր, բարոյական կարիքներին և ցաւերին գոհացում տալու համար։ Եւ որպիսի՜ մեծամեծ յոյսեր, ակընկալութիւններ էին դրվում այդ մեծ ընկերութեան վրա։ Երևի, այդ ժամանակ հիմքեր կային ենթադրելու, թէ ռուսաց կառավարութիւնը թոյլ կը տայ և կը հաստատէ այդպիսի մի համազգային ընկերութիւն։ Սակայն մենք տեսնում ենք մի քիչ յետոյ, որ 1881 թ. յուլիսի 6-ին Կովկասի փոխարքայի պաշտօնակատար գեներալ-ադիւտանտ իշխան Մէլիքօվ հաստատում է «Հայոց բարեգործական ընկերութիւն Կովկասում» անունով ընկերութեան կանօնադրութիւնը, որ ներկայացրել էին նրան ի հաստատութիւն պ. պ. Գ. Սունդուկեան, Բ. Նաւասարդեան (հիմնադիրը ընկերութեան), Միք. Շահպարոնեան, Ս. Մէլիք-Մեհրաբեան և իշխան Ն. Ամատունի, և որի գործունէութեան ասպարէզ տրված է միայն Կովկասը և Անդրկովկասը, իսկ նպատակ՝ հետևեալը.

§ 1. Ընկերութեան նպատակն է նպաստել լուսաւորութեան տարածմանը հայերի մէջ Կովկասում և Անդրկովկասում և օգնել նրանց նիւթականապէս.

§ 2. Այս նպատակին հասնելու համար՝ ընկերութիւնը, ըստ իր ոյժերի զարգացման,

ա) Պահպանում է արդէն գոյութիւն ունեցող հայոց ուսումնարանները և նիւթականապէս նպաստում է նորերը հիմնելուն.

բ) Օժանդակում է ժողովրդի մէջ արհեստների տարածմանը.

գ) Օգնում է ուսանողներին իրանց ուսման ասպարէզի մէջ.

դ) Լոյս է ընծայում գրքեր և պարբերական հրատարակութիւններ ժողովրդի ընթերցանութեան համար, նոյնպէս և այլ գրականական երկասիրութիւններ.

ե) Հիմնարկում է տպարաններ, վիմագրատներ և ընթերցարաններ.

զ) Հիմնարկում է հիւանդանոցներ և այլ բարեգործական հաստատութիւններ.

է) Օգնում է տառապեալներին ժողովրդական թշուառութիւնների ժամանակ, որպիսիք են՝ սով, տարափոխիկ ախտ, հրդեհ և այլն։ Այսպիսի դէպքերում, ըստ պահանջման հարկի, կազմում է առողջապահական մասնախմբեր կամ ուղարկում է իր կողմից հաւատարմատարներ.

ը) Իրաւունք ունի կարևոր դէպքերում նպաստել և այլ ազգօգուտ ընկերութիւններին։

Ուրեմն յոյսերը՝ ստեղծելու մի համազգային լուսաւորական, կուլտուրական կազմակերպութիւն՝ չեն արդարանում։ Բայց Կովկասի հայութիւնն էր ձեռք բերում այդպիսի մի կազմակերպութիւն։

Եւ 1881 թ. նոյեմբերի 15-ին Արծրունու թատրօնում բացվեց նորահաստատ ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը, որին ներկայ էին 122 անդամներ և ուր, բժշկապետ Բ. Նաւասարդեանի զեկուցումից յետոյ, ընկերութիւնը հռչակվեց բացված և ընդհանուր ժողովի առաջին նախագահ ընտրվեց բժշկ. Միքայէլ Շահպարոնեան և առաջին քարտուղար Գէորգ Զմշկեան, իսկ առաջին խորհրդի անդամներ ընտրվեցին գաղտնի քուէարկութեամբ՝ պ. պ. գեներալ Դիմիտրի Տէր-Աստուածատրեանց, Ալէքսանդր Մանթաշեանց, Բագրատ Նաւասարդեանց, Գաբրիէլ Սունդուկեանց, Յովհաննէս Չիթախեանց, Ալէքսանդր Մէլիք-Ազարեանց, Ալէքսանդր Անանեանց, Նիկողայոս Խոսրովեանց և Ներսէս Աթաբէգեան։

Այդ օրից է համարվում ընկերութեան գործունէութեան սկիզբը։

Մի ամսից յետոյ, դեկտ. 20-ին, գումարվում է երկրորդ ընդհանուր ժողովը, ուր զեկուցվում է, որ 1) խորհրդի նախագահ է ընտրվել պ. Ալէք. Անանեան, փոխ-նախագահ՝ գեներալ Դ. Տէր-Աստուածատրեան, գանձապահ՝ Յ. Չիթախեան և ժամանակաւոր քարտուղար՝ Ն. Խոսրովեան, 2) որ ընկերութիւնը ունի արդէն 24 մշտական անդամ, որոնք վճարել են միանուագ 7900 ր., և 441 իսկական անդամ՝ 5-ական ր. վճարող։ Այդ ժողովը ընտրեց ամենայն հայոց վեհ. կաթող. Գէորգ IV-ին ընկերութեան խնամակալ, Ներսէս Վարժապետեան պատրիարքին պատուաւոր անդամ և գաղտնի քուէարկութեամբ խորհրդի համար 5 փոխանդամ՝ Ա. Բիշմիշեան, Յ. Ծովիանեան, Ս. Սպանդարեան, բժ. Մէլիք-Բէգլարեան և Նիկ. Տէր-Յակոբեան։

Այստեղ պէտք է նկատենք, որ Ալէքսանդր Անանեան մնաց խորհրդի նախագահ և վարեց այդ պաշտօնը ամբողջ 18 տարի, հրաժարվելով 1899 թ., երբ կրճատվեցին ընկ. իրաւունքները, և նա վերածվեց Թիֆլիսի հայոց բար. ընկ., նոր կանօնադրութեամբ։

Նոր խորհրդի առաջին գործն եղաւ մշակել և խմբագրել հրահանգ ճիւղերի և տեղական վարչութիւնների համար, որպէսզի գաւառներում բացվեն ընկերութ. ճիւղեր, հրահանգ՝ վերաստուգող յանձնաժողովի համար, թարգմանել կանօնադրութիւնը վրացերէն, որոնել աղբիւրներ դրամական միջոցների, շատացնել անդամների թիւը, մշակել ապագայ գործունէութեան ծրագիրը, մի խօսքով նախապատրաստական գործողութիւններ, որոնք շատ շուտով տուեցին ցանկալի պտուղներ։ Հէնց առաջին տարեշրջանում (1881 թ.

---

*) Տես «Մշակ» № 28.

բայց եթէ կոմպրոմիսը վերջնականապէս խախտուած է Վիէննայի և Պետերբուրգի միջև, նա վաղ թէ ուշ կը սկսվի։ Եւրոպական խաղաղութեան ամբողջ սիստեմի հիմունքները սկսեցին անհետանալ, ապահովութեան նախկին զգացմունքը դիւրին կերպով չի վերադառնայ, թէև թիւրիմացութիւնները մէջտեղից բարձվել են։

«Ստանդարդին» Կ. Պօլսից հեռագրում են, որ պաշտօնապէս հերքվում է այն լուրը, որ օսմանեան զօրքերը առաջ են խաղում դէպի ռուսական սահմանը։

—

Վիէննա. — «Կ. Բիւրօյին» հեռագրում են Կ. Պօլսից, որ այն լուրերը, որոնք բղխեցին Պետերբուրգից Թիւրքիայի պատերազմական պատրաստութիւնների մասին, ոչ մի բանի վրա հիմնված չեն։ Թիւրքիան վերջին ժամանակներս ռուսական սահմանագլխում կենտրոնացրել է միայն Երզնկայի չորրորդ զօրաբանակը, իսկ պարսից սահմանագլխում—մօտ 40 բատալիօն երկու զօրամասերով։ Զօրքերի մի երրորդ մասը պահեստի զինւորներն են կազմում։

Թէհրան. — Մէջլիսի նախագահը հրաժարական տուեց, որը սակայն առայժմ չէ ընդունված։

Մէջլիսը փետրվարի 3-ի նիստում պահանջեց, որ ներքին գործերի մինիստրը հրաժարական տայ։

Կ. Պօլիս. — Փետրվարի 3-ին աւստրօ-ունգարական դեսպան մարկիզ Պալլավիչինին ռուսաց դեսպան Զինովիէվի պատւին ճաշկերոյթ տուեց, որին հրաւիրված էր դիպլոմատիական մարմինը։ («Ե.»)

—

«Кавк.» Թերթի Պետերբուրգի թղթակիցը հեռագրում է.

«Փետրվարի 4-ին իշխան Մակայեվի գինետանը ինքնասպանութիւն գործեց Քութայիսից Պետերբուրգ եկած Քութայիսի ազնւականութեան պարագլուխ իշխ. Նիժարաձէ մօրեղբօրորդին։

«Լուրերին նայած, ինչպէս հաղորդում են լրագիրները, զինուորական մինիստր գեներալ Ռեդիգերը թողնում է իր պաշտօնը և նրա տեղ նշանակվելու է Կրօնշտադի բերդի կառավարիչ գեներալ Իվանովը»։

—

Ամսիս 6-ին պ. Ա. Ս. Անանեանը մտցրեց Կովկասի հայոց բարեգ. ընկերութեան գանձարանը կրթական նպատակների համար ընկերութեանը նուիրած 20,000 ր.։ Ընկերութեան խորհրդի անունով ստացվում են շատ տեղերից յայտարարութիւններ, որ ցանկանում են ճիւղեր բանալ։ Այդպիսի յայտարարութիւններ ստացվել են, ի միջի այլոց, Ախալցխայից, Բաթումից, Փօթիից, Արմաւիրից, Էջմիածնից, Ալէքսանդրօպոլից և Ղազախից։

—

Չորեքշաբթի, փետրվարի 6-ին, ինչպէս հաղորդված էր վաղօրօք, Անդրկովկասի մուֆթին տօնեց իր գործունէութեան 50-ամեակը։

Այդ օրը նախ մզկիթում կատարվեց հանդիսաւոր աղօթք, իսկ յետոյ յոբելեարը ընդունեց շնորհաւորութիւններ իր բնակարանում։

Շնորհաւորելու եկել էին Թիֆլիսի բարձր իշխանութեան ներկայացուցիչները, զանազան հաստատութիւնների ներկայացուցիչներ և մեծ բազմութիւն։

Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպ. Սաթունեան կոնսիստորիայի անդամ Եփրեմ վարդապետ Սուքիասեանի և կոնսիստորիայի 2 քահանաների ուղեկցութեամբ գտնվում էր շնորհաւորողների թւում։ Քահանաներից մէկը կարդաց մի ուղերձ հայերէն լեզուով։ Գարեգին արքեպիսկոպոսը դիմեց յոբելեարին մի ճառով, որի մէջ շեշտեց նրա երկարամեայ բեղմնաւոր գործունէութիւնը յօգուտ իր հօտի լուսաւորութեանը և զարգացմանը ընդհանրապէս և հարևան ազգութիւնների հետ համերաշխութեան գաղափարը տարածելը մասնաւորապէս։ Վերջում սրբազանը ցանկութիւն յայտնեց, որ յարգելի մուֆթին իր այդ ուղղութեամբ շարունակէ գործել մինչև իր վերջին հանգիստը։

Տօնը շատ հաճելի տպաւորութիւն թողեց ներկայ եղողների վրա։

Վերջում յոբելեարը զգացված շնորհակալութիւն յայտնեց բոլորին։

Բ. ԴՐԱՆ ՆԱՀԱՆՋՈՒՄԸ

—

Մենք անցեալ անգամ հաղորդեցինք, որ Թիւրքաց սուլթանը, ստիպված Ռուսաստանի խիստ պահանջներից, սկսեց նահանջել և հրաման տուեց Թիւրքաց զօրքերին թողնել պարսից հողը։

Առաջ ենք բերում «Слово» լրագրի մի առաջնորդող յօդուածը այդ առիթով.

Կ. Պօլսից հեռագրով հաղորդում են, որ Թիւրքաց զօրքերին հրամանագրված է անյապաղ հեռանալ իրանց գրաւած պարսկական հողից և քաշվել դէպի պարսկական սահմանը։

Այդ բանը պէտք էր սպասել, որովհետև վերջերս պարսկական անկախութեանն ու անձեռնմխելիութիւնը երաշխաւորող պետութիւնների պահանջներն այնքան լուրջ կերպարանք ընդունեցին, որ Բ. Դուռը ստիպված եղաւ խոնարհվել։ Ակներև է, որ Բերլինից խոստացված աջակցութիւնը բարի խորհուրդներից և սրտագին խրախուսանքներից դէնը չէր անցնում։ Ինչ վերաբերում է ակտիվ աջակցութեանը, դրանից, պէտք է կարծել, Բերլինում յետ կանգնեցին։ Այդպէս է Բերլինի սովորական քաղաքականութիւնը Բ. Դրան վերաբերմամբ, մի քաղաքականութիւն, որ պայմանաւորվում է բացառապէս անձնական շահերով և սեփական օգուտներ որոնելով։

Բ. Դուռը կուլիսների ետևից անդադար խրախուսվում է, որ չեզոք դիմադրութիւն ցոյց տայ ուրիշ պետութիւնների պահանջներին, և այդ խրախուսանքների շնորհիւ Բերլինը ստանում է իր համար հարկաւոր բոլոր զիջումները, կոնցէսիաններ իր ձեռնարկողների համար և դիւրութիւններ իր առևտրականների համար, իսկ յետոյ, երբ բանը հասնում է պետութիւնների ակտիվ միջամտութեանը, ինչպէս այդ տեղի ունեցաւ կրէտական հարցում, Բերլինը պաղարիւնութեամբ հրաժարվում է որևէ մասնակցութիւնից և կատարելապէս միայնակ է թողնում Բ. Դրանը իր գործերը դասաւելու՝ ինչպէս որ ինքը յարմար է համարում։

Շատ հաւանական է, որ նոյն բանը տեղի է ունեցել և պարսկական հարցում։ Քանի որ չը կար լուրջ միջամտութիւն պետութիւնների կողմից և քանի որ Պարսկաստանում ծագող դժուարութիւնները համապատասխանում էին Բերլինի նպատակներին, որը այդ դժուարութիւնները մի միջոց էր համարում Անգլիայի և Ռուսաստանի ուշադրութիւնը հեռացնելու եւրոպական աւելի լուրջ հարցերից, Ելըզըզ-քեօշկում գաղտնի խրախուսանքներ էին ստացվում, և Թիւրքաց զօրքերը առաջ էին շարժվում դէպի Պարսկաստանի խորքերը։ Իսկ դրանից օգուտ էին քաղում այնպիսի գործեր կարգադրելու համար, ինչպիսին է մակեդոնական երկաթուղիների միացումը աւստրիական և յունական երկաթուղիների հետ։ Իսկ երբ հարցը սկսեց սպառնալ, որ լուրջ բարդութիւններ կառաջացնէ, որոնք վերջ ի վերջոյ կարող էին Բերլինի շահերին վնասել, այն ժամանակ Թիւրքիան բարձի-թողի արվեց, և նա ստիպված եղաւ կամայ-ակամայ յետ քաշվել։

Մնում է միայն զարմանալ, թէ ինչպէս մի շարք նոյնանման օրինակներ խելքի չը բերեցին Բ. Դրանը և չը սովորեցրին նրան ըստ արժանւոյն գնահատելու Բերլինի գաղտնի խրախուսանքները։ Կարծեմ, ժամանակ էր համոզվելու, որ Բ. Դուռը, բացի վնասից, ոչինչ օգուտ չէ ստացել այդ խրախուսանքներից։ Մինչև այժմ գոնէ Բերլինի նրա տուած խորհուրդներից ոչ մէկը չէ կատարվել, և նա կատարելապէս համոզված կարող է լինել, որ ամենալուրջ րոպէում Բերլինը միշտ երես կը դարձնէ նրանից, եթէ տեսնէ, որ իր շահերին սպառնում է ամենափոքր վտանգ անգամ։

Հերթական է և մի ուրիշ լուրջ հարց՝ մակեդոնական հարցը. և Բ. Դուռը այդ հարցում նոյնպէս գաղտնի խրախուսանքներ է ընդունում չեզոք դիմադրութիւն ցոյց տալու։

Բայց այդ հարցի հետ էլ նոյնը կը պատահի, ինչ որ մնացածների հետ է պատահել. ամենակտրական րոպէին գաղտնի խրախուսանքները կը դադարեն, և Բ. Դուռը միայնակ դէմ առ դէմ մնալով Եւրոպայի հետ՝ ստիպված կը լինի զիջել և կատարել իրանից եղող պահանջները, իսկ այդ միջոցին, քանի դեռ այդ կտրական րոպէն չէ հասել, ստացած խրախուսանքների համար Բ. Դուռը կը տայ մի շարք խոշոր կոնցէսիաններ։

Արդեօք աւելի շահաւէտ չէ՞ր լինի միանգամից զիջումներ անել, որոնք վերջ ի վերջոյ անելու են, և կարիք չունենալ գաղտնի խրախուսանքների ու չը տուժել մեծապէս։

Ահա թէ ինչի վրա պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնէին սուլթանի խորհրդականները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Կախ-աւան (Զաքաթ. շր.), 3 փետր.

Անցեալ դեկտեմբերի 22-ի գիշերը Կախաւանի թուրքերի թաղում Նուխու բնակիչ Զաքեար Կուլի-օղլու սպանութեան քստմնելի դէպքը սարսափելի ցնցող տպաւորութիւն գործեց տեղական ազգաբնակութեան վրա, որի մանրամասնութիւնը հետևեալն է։ Զաքեար Կուլի-օղլին այդ օրը Նուխուց գալիս է Կախ-աւան գումարով ոչխարի չորացրած մորթիներ և աղիքներ գնելու. երեկոյեան արևը մայր մտնելու ժամանակ նա փողոցում հանդիպում է իր վաղեմի ծանօթ կախ-աւանցի Մահամմադ-օղլի Բախշիին։ Վերջինս իմանալով Զաքեարի ինչ նպատակով Կախ-աւան գալը՝ հրաւիրում է նրան իր տունը գիշերելու և միևնոյն ժամանակ ծախելու մի քանի հարիւր հատ պատրաստի աղիքներ։ Ողորմելի Զաքեարը առանց մի որևէ կասկածանքի գնում է իր «դօստ» Բախշիի տունը։ Երեկոյեան ժամը մօտաւորապէս 9-ին, ընթրիքից յետոյ, ներս են մտնում Բախշիի տունը նրա խորհրդակից ընկերները — Ժուլա-Հասան Աբդուրահման օղլին, Իդրիս Մուսաօղլին, Իսլամ Սարաղան-օղլին և Իրզա Հաջի-օղլին (Մուրադով), որոնք, փոքր ինչ դէսից-դէնից խօսելուց յետոյ, դուրս են հանում գրպաններից ատրճանակները և, ուղղելով Զաքեարի կրծքին, պահանջում են նրա մօտի փողերը։ Խղճալի զոհը սկզբից դա մի տեսակ հանաք է կարծում, իսկ վերջը, հասկանալով նրանց տմարդի չար դիտաւորութիւնը, փորձում է փախչել, բայց ատրճանակների համազարկը վերջ է դնում երիտասարդ Զաքեար Կուլի-օղլու կեանքին։ Ոճրագործները իրանց որսի վեց հարիւր րուբլին իրար մէջ բաժին անելուց յետոյ՝ դիակը մանր կտրատելով ածում են թոնրի մէջ ու այրում։

Այդ եղեռնական դէպքից հինգ օր անց, գալիս են Նուխուց Զաքեարի եղբայրը և բարեկամները, յայտնում են տեղական նաիբին (պրիստաւ) Զաքեարի անյայտանալը Կախ-աւանում։ Եւ շնորհիւ վերջինիս ձեռք առած ամենախիստ միջոցների, աջողվում է գտնել ոճրագործութեան հետքը։ Բախիշ Մահամմադ-օղլու մայրը, որի ներկայութեամբ իր տան մէջ է կատարվել Զաքեարի ողբերգական սպանութիւնը, հանգամանօրէն պատմում է պրիստաւ Երմօլայեվին։ Խուզարկութեան ժամանակ գտնում են Բախիշ Մահամմադ-օղլու տան թոնրի փոշու մէջից Զաքեարի դիակի կիսավառ ոսկրների շատ մասերը։ Այսօր ձերբակալեց նրանց բոլորին պ. Երմօլայեվը և ուղարկեց Զաքաթալա։

Ն. Շ.

—

Երևան, 5 յունվարի

Ամսիս 3-ին տեղիս իգական պրօգիմնազիայում տեղի ունեցաւ ակտ, ուր ներկայ էին իգական գիմնազիայի տեսչուհին, ուսուցչական սեմինարիայի տեսուչը, քաղաքագլուխը և բազմամարդ երկսեռ հասարակութիւն։ Սկզբից երգվեց „Боже Царя храни" օրհներգը, ապա ամբիօն բարձրանալով պրօգիմնազիայի հիմնադիր տեսչուհի օր. Վերգինէ Տէր-Սարգսեանցը ասաց, որ Երևանի պէս մեծ քաղաքում մի հատ իգական գիմնազիան բաւարարութիւն չէր տալիս, ուստի և շատ երեխաներ զրկվում էին միջնակարգ ուսումից։

«Ի նկատի ունենալով այդ, թոյլտուութիւն խնդրեցի բաց անելու Երևանում ներկայ պրօգիմնազիան։ Կովկասի շրջանային ուսումնարանական հոգաբարձուից թոյլտուութիւն ստանալով, անցեալ 1906 թ. սեպտեմբերի 1-ին ես բաց արի այս պրօգիմնազիան, յոյս ունենալով, որ մեր դպրոցը քիչ թէ շատ կօգնի գիմնազիայում տեղ չը գտած ուսումնածարաւ երեխաներին և կազատէ տգիտութեան խաւարի մէջ խարխափելուց»։ Ապա աւելացրեց, թէ որքան դժուար է մանկավարժի գործը և թէ նրա տուած օգուտը որքան ուշ ենք մենք տեսնելու։ Վերջում յոյս յայտնեց, որ կաշխատի պրօգիմնազիան աւելի հաստատ հիմքերի վրա դնելու և իր կոչման բարձրութեան վրա պահելու։

Յետոյ աշակերտուհիներից մի քանիսը ասացին ոտանաւորներ, ղեկավարութեամբ օր. Ն. Դաւթեանցի, որի ժամանակ մէջ ընդ մէջ երգում էր երգեցիկ խումբը, նուագածութեամբ իրանց ուսուցիչ պ. Դ. Ֆ. Սավլուչենկոյու։

Հանդէսը լաւ տպաւորութիւն թողեց հանդիսատես հասարակութեան վրա, որը վարձատրեց տեսչուհուն բուռն ծափահարութիւններով։

Ինչպէս լսեցինք, միւս օրը քաղաքագլուխը մի զգացված նամակով կրկին շնորհակալութիւն է յայտնել տեսչուհուն և ուղարկել է միրգ և քաղցրաւենիք աշակերտուհիներին բաժանելու համար։

Գ. Աղազադեանց

ԱՐՓԻԱՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Յիշողութիւններ)

II *)

«Արևելքից» հեռանալուց յետոյ Արփիար աշխատում էր սեփական թերթ հիմնել։ Ինքը զուրկ էր դրամական միջոցներից։ Այս պակասը լրացրեց Յ. Շահնազարը, մի հայ-կաթօլիկ երիտասարդ իրաւաբան, որ վաղուց արդէն գործում էր ազգային և գրական հրապարակի վրա, իրան նշանաբան ունենալով համերաշխ գործակցութիւն բոլոր հայերի, առանց դաւանութեան խտրութեան, և առաջադիմական ուղղութեան մասին էլ կատարելապէս համամիտ էր Արփիարին։ Շահնազարը իր ունեցած ամբողջ կարողութիւնը՝ կարծեօք 3000 րուբլու չափ՝ դրեց այդ նպատակի համար։ Արփիարը դարձաւ գլխաւոր խմբագրողը, իրան աջակից ունենալով երկու ուրիշ տաղանդաւոր երիտասարդ գրողներ—Լևոն Բաշալեան և Երուանդ Օտեան. այս վերջինի երգիծաբանական յօդուածներն առանձնապէս աջողութիւն ունէին։ Բաշալեան՝ Կ. Պօլսի այն ժամանակի հրապարակագիրների մէջ շատ կարևոր դիրք էր գրաւել արդէն, համեմատաբար կարճ ժամանակում։ Հրատարակիչ Շահնազարը նոյնպէս լաւ գրող էր և ամբողջովին նուիրված էր լրագրին։ Այսպիսի լուրջ ույժերով 1890-ին սկսեց հրատարակվել «Հայրենիք» օրագիրը։ Արփիար անմիջապէս սկսեց ինձ ուղարկել «Հայրենիքն» և խնդրեց, որ աշխատակցեմ նրան այստեղից։ Բացի դրանից «Հայրենիքը» շատ յաճախ արտատպում էր իմ յօդուածները «Մշակից» և «Հանդէս Ամսօրեայից» (Վիէննայի Մխիթարեանների)։ «Հայրենիքը» մեծ յեղաշրջում առաջ բերեց Թիւրքահայ հասարակութեան ըմբռնումների մէջ։ Նա ժողովրդական թերթ էր բառիս բուն նշանակութեամբ։ Նա չէր խոնարհվում մեծամեծների առջև, ինչպէս Կ. Պօլսի բոլոր միւս հայ լրագիրները, չէր շողոքորթում նրանց, չէր ծառայում նրանց հաճոյքին, այլ թարգման էր հասարակ համոզմունքների, որոշ ուղղութեան, որ միշտ նոյնն էր մնում թերթի բոլոր մասերում։ Շահնազար, Արփիար և Բաշալեան՝ «Հայրենիքը» դարձրին Կ. Պօլսի «Մշակը»։ Բայց այս նոր ուղղութիւնը մեծ խոչընդոտներ էր պատահում. նրա դէմ ազդեցիկ հայ եկեղեցական և աշխարհական անձերի գանգատներն սկսեցին մեծանալ և Թիւրքական տպագրական տեսչութիւնը շարունակ փակում էր թերթը։ Կ. Պօլսում շատ յաճախ տեսնված երևոյթ է, որ կառավարութիւնը «անպայման և բոլորովին դադարած է» յայտարարում մի որևէ թերթ։ Բայց բաւական է, որ թերթի հրատարակիչը մի ազդեցիկ անձնաւորութեան միջնորդութեանը դիմէ, և ահա մի քանի օրից կամ ամսից յետոյ միևնոյն թերթը միևնոյն խմբագրութեամբ կը սկսի դարձեալ լոյս տեսնել։ Այսպէս էր լինում «Հայրենիքի» հետ։ Այսպիսի մի փակումի առիթով Արփիարը ինձ գրում է (1891 թ. մայիսի 9). «Հայրենիքը» տակաւին չբացուեցաւ։ Երբ Օրմանեան մեկնեցաւ (Էջմիածին կաթողիկոսական ընտրութեան համար) ու կաթողիկոսական խնդիրն իր լուծումին մօտ էր, և այլ ես մենք չէինք կարող ազդել, յուսացինք թէ հրաման կը տրուի («Հայրենիքի» վերստին հրատարակման). դիմումներ ըրինք, յաջողութիւն գտանք, և հրամանագիրն ալ ստորագրուելու վրայ էր. պատրաստութիւններ տեսանք թերթը յաջորդ օրը հրատարակելու, գրաշարները բերինք, յօդուածները գրեցինք, ձեռ էլ հեռագրեցինք, բայց մի քանի ժամուան մէջ լուրը կը տարածուի. մեր հակառակորդները՝ պատրիարքն (Խորէն Աշըգեան) ու մի քանի վսեմաշուքներ դիմումներ կընեն ու «վտանգին առջևը կառնեն»։ «Հայրենիքի» երևումը իրենց համար վտանգ մըն էր եղեր։ Եւ հիմա այս վիճակին մէջ ենք մնացեր։ «Հայրենիքի» բացման կամ չբացման խնդիրն այժմ թուի թէ կայսեր (սուլթանի) ուղղակի հրամանէն կախում պիտի ունենայ. գործն այսքան ծանրացած է»։ Սուլթանի ուղղակի հրամանով թէ այսպէս, այդ չը գիտեմ, բայց 2 ամիս վերջը, այն է՝ յուլիսի 13-ին «Հայրենիքը» վերստին բացվեց։ Արփիարի յիշած մեծամեծները, ինչպէս վերև էլ ասացինք, միշտ դէմ էին եղել «Հայրենիքին»։ Այս հակասութիւնը Արփիար իր մի նամակում այսպէս էր բացատրում ինձ. «Ազնուաշուքներու, վսեմաշուքներու և վսեմափայլներու շրջանակները «Հայրենիքի» սիրող չեն։ Երևակայեցէք, որ անոնց անունները պարզ կը գրենք առանց շողշողուն տիտղոսներու, առանց զանազանելու «հասարակ մահկանացուներէն». անոնց հարսանիքներն ու մեռելները, անոնց ուղևորութիւնները մեզ համար կարևորութիւն չունին ու չենք «գոհունակութեամբ» կամ «խորին ցաւով» գրեր»…

Երբ 1891-ին կաթողիկոսական ընտրութիւն էր կատարվում Էջմիածնում, Արփիար ինձ խնդրեց, որ «Հայրենիքի» համար մի թղթակից գտնեմ, որ անձամբ գնայ Էջմիածին և այնտեղից թէ հեռագիրներով և թէ նամակներով տեղեկութիւն հաղորդէ Կ. Պօլիս։ Ես դիմեցի պ. Աբէլ Ալրեխեանին, տուի ճանապարհածախսը և մի գումար էլ հեռագիրների ծախքի համար, և նա մեկնեց Էջմիածին։ Իմ վճարած գումարն ես ի հարկէ ստացայ յետոյ պ. Շահնազարից։ Այդ հեռագրական տեղեկութիւններն ու թղթակցութիւնները մեծ գոհունակութիւն պատճառեցին այն ժամանակ «Հայրենիքի» շրջանին։

1894-ին ես բաւական երկար ժամանակ մնացի Կ. Պօլսում և յաճախ մտնում էի «Հայրենիքի» խմբագրատունը տեսնվելու պ. Շահնազարի և խմբագրութեան միւս անդամների հետ։ Բայց Արփիարի և Բաշալեանի հետ մեր տեսակցութեան գլխաւոր տեղը Café Splendide-ն էր։ Այս սրճարան-ճաշարանը գտնվում է Կ. Պօլսի եւրոպական մասի ամենաբանուկ փողոցի վրա և մեծ հռչակ է վայելում։ Երեկոները շատերի rendez-vous-ի տեղն էր։ Ճաշարանի տէրը մի հայ-կաթօլիկ երիտասարդ է, Մկրտիչ Թօգաթլեան, որ Կ. Պօլսի հայերի համար մի տեսակ պարծանքի առարկայ է։ Կ. Պօլսում շատ տարածված է սրճարաններում ժամանց անցնելու սովորութիւնը, մանաւանդ երեկոները, և մինչև Թօգաթլեանը՝ այս արհեստը գլխաւորաբար յոյների և եւրոպացիների ձեռքն էր։ Այնպէս էր ընդունված թէ հայը ընդունակ չէր շքեղ և եւրոպական ճաշակով սրճարան և ճաշարան պահելու։ Այս «պակասութիւնը» բառնալու համար Պերայի հայոց հարուստ Երրորդութեան եկեղեցու հոգաբարձութիւնը իր կալուածքի վրա (ուր նախ թատրոն էր և այրվեց) մի փառաւոր երեքյարկանի շէնք կառուցեց, Թօգաթլեանի ծրագրով, և վարձու տուեց սրան։ Հարուստ հայեր (ինչպէս և մի անգլիացի) նիւթական օգնութիւն մատուցին, դրամական փոխատուութեան ձևով, Թօգաթլեանին, և սա այնպիսի մի շքեղ և եւրոպական նուրբ ճաշակով սրճարան, ճաշարան և պանդոկ հաստատեց այդ շէնքում, և այնպիսի հմտութեամբ գործը տարաւ, որ այնուհետև նա դարձաւ առաջինը Կ. Պօլսում և մեծ աջողութիւն ունեցաւ։ Ինքն ըստ ինքեան ենթադրվում է, որ եկեղեցին էլ եկամուտի բաւական նպաստաւոր և հաստատուն աղբիւր ունեցաւ դրանով։ Թօգաթլեան դրանից 10 տարի յետոյ մի փառաւոր ամառնային պանդոկ էլ կառուցեց Բօսֆորի եզերքին և աջողութեամբ սկսեց մրցել նաև եւրոպական նշանաւոր Summer palace-ի հետ, թէև այս վերջինի դիրքն աւելի գեղեցիկ է, շնորհիւ իր սքանչելի պարտէզին։ Ինչպէս անձամբ տեսել եմ, լաւ ճաշելու համար եւրոպացի ճանապարհորդները շատ անգամ նախապատւութիւն էին տալիս Թօգաթլեանի այս պանդոկին (Hôtel d'Angleterre), թէև իջևանում էին Summer palace-ում (պատկանում է միջազգային Vagons-lit ընկերութեան)։ Ես աւելորդ չը համարեցի այս միջանկեալ յիշատակութիւնը անել Թօգաթլեան ճաշարանի մասին, որովհետև բացի նրանից, որ նա շատ յայտնի է և շոյում է Կ. Պօլսի հայերի ազգային ինքնասիրութիւնը, ես էլ իմ «յիշողութիւնների» ընթացքում յաճախ առիթ պիտի ունենամ Splendide-ը յիշելու։

Արփիար և Բաշալեան շատ անգամ գալիս էին Café Splendide, ուր ես սովորաբար ճաշում էի երեկոները, և այնտեղ երկարօրէն խօսում էինք օրվայ հարցերի մասին։ Այս այն ժամանակն էր, երբ Սասունի կոտորածը մեծ յուզմունք էր պատճառել Եւրոպայում և եւրոպական 3 դեսպանների (ռուսաց, անգլիական և ֆրանսիական) պահանջմամբ քննիչ յանձնաժողով էր ուղարկվել Սասուն և սկսվել էր բանակցութիւնը նրանց և Բ. Դրան միջև հայկական նահանգների բարենորոգումների մասին։ Այս բանակցութիւններն են, որ յետոյ յանգեցան համբաւանօթ մայիսեան ըէֆօրմներին (1895)։

Մեր այս տեսակցութիւնների ժամանակ Արփիար և իր մի ընկերը մի օր շատ նեղացած երևցան ինձ և սկսեցին զարմանք յայտնել իմ վարմունքի մասին…։ Ես նախ չը հասկացայ նրանց նեղանալու պատճառը. մի քանի օր յետոյ միայն ես իմացայ պատ-

---

*) Տես «Մշակ» № 29.

նոյեմբ. 13-ից ցվերջ 1882 թ.) ընկերութիւնը ունեցաւ 31 մշտական անդամներ, որոնք վճարեցին անձեռնմխելի փօնդի համար 12,200 ր., և 654 իսկական անդամներ, իսկ հէնց կենտրօնական խորհրդի բացումից մի ամիս յետոյ, այն է 1881 թ. դեկտ. 22-ին, Շուշում հիմնվում է ընկերութեան անդրանիկ ճիւղը, որի հիմնադիր հանդիսանում է այն ժամանակվայ Ղարաբաղի ազգային թեմական դպրանոցի տեսուչ Հ. Առաքելեանը։ Ճիւղերի մասին հրահանգը, որ արդիւնք է Գ. Սունդուկեանի և Բ. Նաւասարդեանի աշխատութեան, հաստատվեց ընդհ. ժողովից 1882 թւի յունվարի 10-ին։

Դրանից յետոյ անմիջապէս խորհուրդը հանդէս եկաւ իր գործունէութեան ծրագրով, որ ցոյց է տալիս, թէ նա, յիրաւի, շատ լաւ ըմբռնել էր ընկերութեան բուն նպատակը և հայ ինտելիգենցիայի ձգտումները՝ այդ ընկերութիւնը հիմնելիս։ 1882 թ. յունվարի 8-ին նա որոշում է իր գործունէութիւնը սկսել հիմնելով մի ապաստարան բանւորների և մշակների համար և նպաստելով Թիֆլիսի հայոց չքաւոր ծխական ուսումնարաններին։ Յունվարի 15-ին նա որոշում է յայտարարել, որ նա չը պէտք է օգնէ մասնաւոր անձանց, այլ նրա նպատակը՝ ընդհանրութեան օգնելն է, որոշում է բանալ Թիֆլիսի յետ ընկած Խարփուխ թաղում ծխական դպրոց։ Փետրվարի 26-ին նա որոշեց հիմնել Թիֆլիսում մի ապաստարան չքաւոր աշակերտների համար և մարտի 6-ի նիստում հաստատեց այդ ապաստարանի նախագիծը և յատկացրեց նրա պահպանութեան համար տարեկան 1800 ր. և միանուագ կահ-կարասիքի համար 700 ր.։ Տեսնվում են բոլոր պատրաստութիւնները՝ ապաստարանը բանալու, գնվում են կահկարասիքը, բայց նա չը բացվեց հոգաբարձու Եանովսկու յարուցած դժուարութիւնների պատճառով։ Մայիսի 7-ի և 14-ի նիստերում նա քննութեան առաւ Գրիգոր Արծրունու առաջարկը՝ հիմնելու մշեցի մշակների փոխադարձ օգնութեան ընկերութեան կասսա և, Արծրունու ու մշեցի մշակների կողմից ընտրված ներկայացուցիչների մասնակցութեամբ, վերջապէս մշակելով ու խմբագրելով այդ կասսայի նախագիծը՝ որոշեց ներկայացնել կառավարութեան ի հաստատութիւն։ Թէ ապաստարանի և թէ մշակների կասսայի նախագծերը 1882 թ. յունիսի 13-ին ենթարկվում են ընդհ. ժողովի քննութեան և հաստատութեան։ Նոյն յունիսի 7-ին խորհրդի գանձապահ է ընտրվում պ. Ալ. Մելիք-Ազարեան, որ վարում է այդ պաշտօնը ամբողջ 17 տարի՝ մինչև 1899 թ., իսկ քարտուղար ընտրվում է պ. Աւետիք Եզեկեանը, որ վարում է այդ պաշտօնը մինչև 1892 թ. սեպտ. ամիսը։ Օգոստոսին որոշվում է, համաձայն Շուշու ճիւղի միջնորդութեան, թոյլտուութիւն ստանալ Շուշում բանալու մատենադարան-ընթերցարան։

Այս որոշումներն արդէն գաղափար են տալիս, թէ ընկերութեան գործունէութիւնը որքան նպատակայարմար և համակրելի էր։

ճառը, և այն ժամանակ նեղանալու կարգն եկաւ ինձ։

Արժէ պատմել այս դէպքը։

Այն միջոցին Կ. Պօլսի երկու հայ պատրիարքները՝ Իզմիրլեան (լուսաւորչականների) և Ազարեան (կաթօլիկների) միմեանց բոլորովին հակառակ ընթացք էին բռնել կառավարութեան հանդէպ։ Իզմիրլեան համարվում էր յեղափոխական շարժման համակրող, իսկ Ազարեան հակայեղափոխական։ Ազարեան՝ իբրև Թիւրքերի հետ հաշտ ընթանալու քաղաքականութեան կողմնակից՝ ազգային դատի մատնիչ էր համարվում այնպէս, ինչպէս երկու հայ առաջնորդ էլ, Բարդուղիմէոս եպիսկ. Չամչեան և Մեսրոպ եպիսկ. Ադրիանապօլսի։ Այս վերջինին Իզմիրլեան նոյն իսկ պաշտօնանկ էր արել իր Թիւրքասէր քաղաքականութեան համար։ Որովհետև ես մի քանի անգամ եղել էի թէ Ազարեանի և թէ Իզմիրլեանի մօտ, իսկոյն լուր էին տարածել, թէ ես աշխատում եմ մօտեցնել երկու պատրիարքներին... ի վնաս ազգային դատի։ Այս լուրը այն պատճառով աւելի հաւանականութիւն էր գտել, որ արդէն պօլսեցի մի քանի հայ առաջաւորներ այդպիսի մի փորձ արել էին, բայց ընդդիմութեան էին պատահել Իզմիրլեանի կողմից, որ չէր ուզեցել և ոչ իսկ տեսնել Ազարեանին և խօսել նրա հետ։ Ենթադրել էին, թէ այդ անաջող փորձն այժմ ես էի շարունակում։ Ինչպէս ասացի, ես իրօք տեսնվում էի թէ մէկի և թէ միւսի հետ, բայց այդ հարցի առիթով թէ մէկին և թէ միւսին իմ կողմից ոչ մի առաջարկութիւն չէի արել։ Ազարեան մեռած է, բայց Իզմիրլեան կենդանի է, կարող է վկայել։

Լաւ կը լինէր թէ վատ երկու պատրիարքների տեսակցութիւնը՝ այդ ուրիշ հարց է. յամենայն դէպս ես այդպիսի միջամտութեան չէի ձեռնարկած, որին համոզվեցին նաև ինձ մեղադրողները։

Այս դէպքից յետոյ Արփիար ինձ հրաւիրեց իրանց տունը, ճշտագոյնը՝ իր եղբօր տունը, ուր հրաւիրված էին բազմաթիւ անձեր նոյն խմբին պատկանող, որոնց նա ինձ ներկայացրեց, և հաճելի երեկոյ անցկացրինք։

Այժմ գանք Արփիարի յեղափոխական գործունէութեան։

Սարուխան

—

Գանձակ, 6 փետրվարի

Անհուն կսկիծով ողբում ենք անման Արփիար Արփիարեանի վաղահաս մահը։ Գանձակի բանիմաց դասը գայրոյթով է յիշում անգութ մարդասպանին։ Սիրեցեալ Հայկակի իմաստալից յօդուածները «Մշակում», մանաւանդ 80-ական թւականներին, դեռ թարմ են «Մշակի» ընթերցողների սրտերում։

Գարեգին քահ. Թումանեանց

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Փետրվարի 11-ին, Թիֆլիսի նահանգական պալատում, դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ, կը քննվի Տավկլեանցի, Աղասեանցի և Մանուչարեանի գործը, որոնք մեղադրվում են «Դաշնակցութիւն» կուսակցութեան պատկանելու մէջ։ Պաշտպանելու են Պ. Դօլուխանեան, Ի. Դօլուխանեան և Յովհաննիսեան։

—

Փետրվարի 18-ին Թիֆլիսի դատաստանական պալատում տեղի կունենայ վրաց «Լամպարի» լրագրի նախկին խմբագիր Թաւարտկիլաձէի գործի քննութիւնը։ Քննութիւնը կը լինի դռնփակ՝ դասային ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Պաշտպանելու է երդ.-հաւ. իշխ. Բարատօվ։

ԹԻՖԼԻՍԻ ԴՈՒՄԱՅԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Թիֆլիս քաղաքի արհեստանոցների նորմալ հանգստեան պարտադիր կանոնների նախագիծը, որ հաստատեց քաղաքային դուման փետրվարի 4-ին.

1) Թիֆլիսի բոլոր արհեստանոցներում աշխատանքները պէտք է կատարվեն ինն ժամից ոչ աւել, որից ութ ժամը ընկնում է զուտ աշխատանքի, իսկ մի ժամը՝ հանգստութեան և սնունդի համար։

Ծանօթութիւն.—Տօների նախընթաց օրերում, երբ արհեստանոցներում արգելվում է աշխատել (§ 7), աշխատանքը կատարվելու է ոչ աւելի քան վեց ժամ, բայց առանց որևէ միջարարի հանգստութեան և ուտելիքի համար։

2) Բոլոր նոյնանման արհեստանոցներում աշխատանքները պէտք է սկսվեն միևնոյն ժամում. ա) ձուլարաններում, փականագործների, ջրանցքների, տաղձագործների, եւրոպական կօշկակարների, լիմօնադների, կարէտների, դարբինների, ճախարակագործների, պաստառագործների, աղօրանների, տակառագործների, աղիւսագործական, կղմիտի, դոյլագործական, ասիական կօշկակարների, փորագրիչների, տրեխներ պատրաստելու, դաբաղների, թամբագործական, կլայէկի, պղնձագործների, կալբասի և մաշկագործների արհեստանոցներում—ամառը առաւօտեան ժամը 6-ից (ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը) և ձմեռը առաւօտեան ժամը 7-ից (հոկտ. 1-ից մինչև ապրիլի 1-ը). բ) գործիքների, զինագործական արհեստանոցներում և կօնդիտէրներում—առաւօտեան ժամը 7-ից՝ ամառը և ձմեռը. գ) մասնաւորապէս բուլկի թխելու և կօնդիտէրներին կից գտնվող բուլկի վաճառելու բաժանմունքներում—առ. ժամը 6-ից. դ) հին հագուստեղէն վաճառող, դերձակների, կազմարարների, ժամագործների, ոսկերիչների, ակնագործական արհեստանոցներում—առ. ժամը 8-ից. ե) թոնիրներում և փռերում թէ ամառը և թէ ձմեռը առ. ժամը 4-ից. զ) տղամարդկանց և կանանց դերձականոցներում և գլխարկ կարողների արհեստանոցներում—ամառը առ. ժամը 7-ից, ձմեռը ժամը 8-ից. է) վարսավիրների և սափրիչների արհեստանոցներում—ամառը առ. ժամը 8-ից, ձմեռը՝ ժամը 9-ից։

3) Հանգստի և ուտելիքի մի ժամը նշանակվում է. ժամը 8-ին աշխատանքը սկսող արհեստանոցներում—ժամը 11-ին, իսկ մնացած բոլոր արհեստանոցներում—ցերեկվայ ժամը 12-ին։

Ծանօթութիւն.—Կօնդիտերներում, բուլկի թխելու արհեստանոցներում, թոնիրներում և փռերում պարտադիր մի ժամվայ ընդմիջումը նշանակվում է ոչ որոշեալ ժամանակ, այլ այն ժամերում, որոնք յարմար են իւրաքանչիւր հաստատութեան համար, համաձայն այդ հաստատութիւնների արտադրած արդիւնքի չափի պայմաններին.

4) Բացի § 1-ում ցոյց տուած նօրմայից, տէրերի և բանւորների փոխադարձ համաձայնութեամբ, նշանակվում են սովորական աշխատանքից դուրս և տօնական աշխատանքներ՝ միայն ստորև յիշատակած դէպքերում. ա) տղամարդկանց և կանանց դերձականոցներում—միայն սգի զգեստների հերթական պատուէրները պատրաստելու համար, բայց լի օրերը չորս ժամից ոչ աւելի, և նոյնքան ժամ էլ տօն օրերը. բ) ջրանցքների խողովակներ. գ) կօնդիտերներում, բուլկի թխելու արհեստանոցներում, թոնիրներում և փռերում—միայն այն դէպքերում, երբ տեխնիքական բարդութիւններ են ծագում. դ) կօնդիտերներում և բուլկի թխելու արհեստանոցներում թոյլատրվում է անընդմիջում աշխատանք Զարչարանքի շաբաթվայ բոլոր օրերում, դեկտեմբերի 22, 23, 24, 29, 30 և 31-ին և յունվարի 4, 5-ին, իսկ ե) թոնիրներում և փռերում սովորական աշխատանքից դուրս աշխատել թոյլատրվում է Զարչարանքի շաբաթվայ վերջին 3 օրերը, դեկտեմբերի 22, 23, 24, 30, 31-ին և յունվարի 4, 5-ին. զ) կօլբասի արհեստանոցներում սովորականից դուրս աշխատանք թոյլատրվում է Զարչարանքի շաբաթը և Ծննդեան առաջին շաբաթվայ ընթացքում։

5) 17 տարիքը չունեցող արհեստանոցի ծառայողները, սննդի համար որոշած սովորական մի ժամից բացի, բոլորովին աշխատանքից ազատվում են առ. ժամը 8-ից մինչև ցերեկվայ ժամը 11-ը։

6) Բացի դրանից իւրաքանչիւր ազգութեան պատկանող ծառայողները աշխատանքներից ազատ են իրանց ազգային տօներին, և մայիսի 1-ին, իբրև բոլոր դաւանութիւնների բանւորների տօնական օր։

8) Իւրաքանչիւր արհեստանոցում պէտք է կախված լինի աշխատանքը սկսելու, աւարտելու և ընդմիջման ժամանակի ցուցակը, ինչպէս և յիշատակված այն տօները, երբ աշխատանք չէ լինելու։

9) Այս պարտադիր կանօնները չեն տարածվում այն արհեստանոցների աշխատանքների վրա, որոնք այնպիսի արտակարգ պայմանների մէջ են գտնվում, որ սպառնում են նիւթի ամբողջութեան և հէնց իրանց արհեստանոցներին։

10) Այս պարտադիր կանօնների տպագրված բնագիրը պէտք է կախված լինի ամէն մի արհեստանոցում, աչքի ընկնող տեղում։

ԺԱՆԴԱՐՄ. ՌՕՏՄԻՍՏՐ ԱՊՊԵԼԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Ալէքսանդրօպօլում փետրվ. 2-ի ցերեկվայ ժ. $12^{1}/_{2}$-ին Ալէքսանդրեան փ. վրա, Կուսիջուլեանի մագազինի առաջ, ատրճանակի երկու հարուածով տեղն ու տեղը սպանվեց ժանդարմական ռօտմիստր Ապպէլ։ Սպանողի ետևից հետապնդող ոստիկանը, որոշ տարածութիւն անցնելուց յետոյ, արձակում է երեք անգամ ատրճանակից։ Փամփուշտները հատնելով տեղի է տալիս, և սպանողը կարողանում է անյայտանալ։

Դէպքից անմիջապէս յետոյ ամբողջ թաղամասը շղթայվում է զօրքերով, որտեղ կատարվում են խուզարկութիւններ։

Ձերբակալված են փողոցի երկու կողմերի խանութպաններից շատերը, թւով մօտ 25 մարդ, որոնք հետզհետէ արձակվում են։

Դէպքի առիթով, Երևանից ժամանեցին ժամանակաւոր գեներալ-նահանգապետ Եացկեվիչը, փոխ.-նահանգապետ Բարանօվսկին, Երևանի ժանդարմերիայի պօլկօվնիկը, Երևանի առանձին գործերի քննիչը։ Ամսիս 3-ի ցերեկվայ ժամը 12-ին դիտեցին դէպքի վայրը, թէ որ ճանապարհով է անցել սպանողը. հետապնդող քաղաքապահը միառմի ցոյց էր տալիս նրա ամբողջ անցած ճանապարհը։ Սպանվածի դիակը նոյն օրը ուղարկվեց քաղաքային հիւանդանոցը. ամսիս 4-ին, տեղական զօրքերի ուղեկցութեամբ և բազմաթիւ քաղաքացիների մասնակցութեամբ մարմինը փոխադրվեց կայարան, որտեղից տարվել է Թիֆլիս։

Փետրվարի 5-ին, Լօրիս-Մելիքեան և Ալէքսանդրեան փողոցների գրեթէ բոլոր խանութպանները կանչվեցին քաղաքի քննիչի մօտ, որտեղ հարց ու փորձի են ենթարկվել դէպքի առիթով։

Փետրվարի 4-ին երկաթուղու կայարանում կասկածով ձերբակալված է մի վրացի, Լօրդկիպանիձէ ազգանունով։

(«Ալ.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թագաւոր Կայսրը յունվարի 11-ին բարձրագոյնս թոյլատրել է Թիֆլիսի վաճառական Կրասնեանսկուն՝ լայնուղի երկաթուղագիծ կառուցանելու փորձեր անել 1) Գեօկչայից Նուխի և Զաքաթալա քաղաքների միջով մինչև Սղնախի գաւառի Սակօրօ գիւղը, 210 վերստ տարածութեամբ. 2) Կարվենդ կայարանից Միլսկի և Մուղանի դաշտերով մինչև Լէնքօրան, 220 վերստ տարածութեամբ և 3) Միլսկի կայարանից վերև, Արաքս գետի ձախ ափով, մինչև Ակէր գետը, 115 վերստ տարածութեամբ։ («К.»)

◆ Կովկասի գլխաւոր իշխանութիւնը հաստատել է Թիֆլիսի բուսաբանական այգուն կից այգեգործ բանւորների դպրոցի ընդունելութեան նոր կանօնադրութիւնը։ Հին կանօններով այս դպրոցն ընդունվում էին 17—19 տարեկան պատանիներ և, չը նայած հմուտ այգեգործների կարիքին, այդ դպրոցի ընթացաւարտների թիւը քիչ էր։ Նոր կանօնադրութեամբ դպրոցում ընդունվելու են 25—37 տարեկան մարդիկ։

◆ Կովկասի Փոխարքայի թոյլտուութեամբ Կովկասի զեմստվային գումարներից 3000 րուբլի է յատկացված՝ Երևանում Սարդարի այգում մի շինութիւն շինելու այնտեղ բացվող այգեգործ բանւորների դպրոցի համար, Թիֆլիսի բուսաբանական այգուն կից գտնվող դպրոցի տեսակով։ Այդ նպատակով մի շինարար մասնաժողով է կազմված, որի կազմի մէջ մտնում են Երևանի նահանգի պետական կալուածների կառավարիչ Սրդասէնօվ, Սարդարի այգու կառավարիչ գիւղատնտես Կանդուրալեան և նահանգական ինժեներ Միրզոյեան։

◆ Գանձակի նահանգապետը դիմել է երկրագործութեան մինիստրութեան գլխաւոր կառավարիչ Կովկասի լիազօրին, միջնորդելով որ 4023 պուդ բամբակի սերմ ձրիաբար տրվի՝ ազգաբնակութեանը բաժանելու համար։

◆ Բամբակի սերմի գները Անդրկովկասում 75 կօպէկից բարձրացել են 1 ր. 40 կ. պուդին։

◆ Թիֆլիսի քաղաքային լաբօրատօրիան, քննելով Ասարգիսովի ֆիրմայի մրգէ կօնսէրվները, գտաւ, որ նրանց մէջ պարունակվում է արճճի աղ։ Լաբօրատօրիան անհրաժեշտ համարեց այդ կօնսէրվները վաճառքից հանել։ «(Зак.)»

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի ծառայողները իրանց ընկերներին խնդրել են քաղաքավարի վարվել հասարակութեան հետ և նկատողութիւնների առիթ չը տալ։

◆ Երէկ ստացանք հետևեալ հերքումը Թիֆլիսի նահանգապետի դիւանատնից. «Ի հերքումն «Մշակ» լրագրի փետրվար 6-ի № 29-ում տպված այն լուրի, որ Թիֆլիսի նահանգական բանտի քաղաքական և քրէական բանտարկեալները հացադուլ են յայտարարել, հաղորդվում է, որ բանտարկեալների լցնելու պատճառով, նահանգական բանտը յիրաւի նեղ է, իսկ բանտային կոմիտէտի միջոցների պակասութեան շնորհիւ էլ հնարաւոր չէ լինում հեռացնել այն մի քանի պակասութիւնները, որ նկատվում են բժշկական օգնութեան, սնունդի մէջ և այլն։ Բանտարկեալները հացադուլ յայտարարեցին, ինչպէս շատ անգամ, տեսքի համար և իսկական հացադուլի կերպարանք չը տուին։ Բանտարկեալների բողոքները և գանգատները անուշադիր չը մնացին, բայց կարող են բաւարարութիւն ստանալ միայն այն դէպքում, երբ հասարակութիւնը օգնութեան կը գայ բանտային կօմիտէտին իր նուէրներով՝ բանտարկեալների կենցաղը բարելաւելու համար»։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան նախկին քարտուղար Ս. Ջրէլաշվիլը ստացել է քարտուղարութեան նոր պաշտօն Թիֆլիսի էլեքտրաքարշի ընկերութեան մէջ։

◆ Թիֆլիսի ոստիկանապետը կարգադրել է պրիստաւներին, համաձայն քաղաքային վարչութեան միջնորդութեան, չը փակել խմիչքեղէնների խանութները փետրվարի ընթացքում պատենտներ չը վերցնելու պատճառով, որովհետև, խնդրագրերի շատութեան պատճառով, վարչութեան դիւանատունը հնարաւորութիւն չունի բոլորին միանգամից թոյլատրել վկայականներ տալ։

◆ Եարալովի փակված գործարանի բանւորները դիմել են Թիֆլիսի քաղաքագլխին, խնդրելով միջամտել՝ 200 բանւորներից 70-ին արձակելու պատճառով բանւորների և գավօդատիրոջ մէջ ծագած միջնադէպը բարձելու։ Եարալովը արձակված բանւորներին առաջարկում է երկու շաբաթվայ վարձատրութիւն, իսկ բանւորները պահանջում են երեք ամսվանը։

◆ Ռուսաց կառավարութիւնը պահանջ է ներկայացրել շվէյցարական դաշնակցական կառավարութեան, որ իր ձեռքը յանձնէ Կարպինսկուն և բժ. Սեմաշկօյին, որոնք ձերբակալված են Թիֆլիսի բանկի կողոպտման գործին մասնակցելու համար։ («Р. С.»)

◆ Թիֆլիսի արհեստաւորաց դպրոցի նախկին վերատեսուչ Գ.-ի իւրացրած 3000 րուբլու գործի քննութիւնը քաղաքային վարչութիւնը յանձնել է վարչութեան անդամ իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկին։

◆ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ համարի (№ 30-րդ) 3-դ երեսում, բանաստեղծական երկրորդ սիւնակի ներքևի մասում, մի սխալ է սպրդել։ Ներքևից հաշւած՝ 4-դ տողի վրա գրված է՝ «...որի ետևից կերեւայ և դրօշակակիրը». պիտի լինի՝ «...որի ետևից չերևայ...» և այլն։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Փետրվարի 6-ին, երեկոյեան ժամը 7-ին, երբ հիւսն Միքայէլ Ավանեսովը տուն էր վերադառնում, Մըլնայա միջանցքում նրան կանգնեցրել են 3 երիտասարդներ և, դանակով սպառնալով, վերցրել են նրա արծաթէ գօտին 60 ր. արժողութեամբ և անյայտացել են։ Կասկածով ձերբակալված է տեղացի Կօնստ. Օքրօփիրիձէն։

◆ Փետրվարի 6-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Թիֆլիսի 2-րդ կարգի վաճառական Գէորգ Զիլինգարեանը անցնելով Դվորցօվայա փողոցով և գրպանում բռնելով ատրճանակ՝ անզգոյշ վերաբերվելուց կրակել է, ոչ ոքի վնաս չը պատճառելով։ Զիլինգարեանը ունի զէնք կրելու թոյլտուութեան վկայական։

◆ Թիւրքահպատակ Սերգէյ Գելանովը հաղորդել է ոստիկանութեան, որ փետրվարի 6-ին, երեկոյեան ժամը 7-ին, նրա փուռը (Ծղնէթսկայա փողոց) մտել են ատրճանակներով զինված 6 տեղացիներ և, մահվան սպառնալիքով, վերցնելով դրամարկղից 20 րուբլի, անյայտացել են, օդի մէջ 3 անգամ կրակելով։ Գելանովի ընկեր Գասպար Աբասովին, որը ցանկացել է դիմադրել չարագործներին, նրանցից մէկը դանակով աջ ձեռքից թեթև կերպով վիրաւորել է։

◆ Փետրվարի 6-ին, երեկոյեան մօտ 7 ժամին, Մետեխի բանտի միջին հարկի արտաքնոցում գտել են մի սպանված բանտարկեալ՝ Իսահակ Գաժըշվիլուն։ Հանգուցեալին հասցրել են 2 վէրք փորին և վզին։ Մարդասպանի ով լինելը պարզելու համար միջոցներ են ձեռք առնված։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

(Բագուի լրագիրներից)

◆ Բագուի քաղաքապետ գեներ.-մայոր Ֆօլբաումը հերթականապէս առաջարկել է Բագուի և Բալախանու ոստիկանապետներին՝ ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ և անձնապէս հսկելով և ղեկավարելով հեռացնել քաղաքապետութեան գավօդային-նաւթահանքային րայօններում բոլոր այն պակասութիւնները, որպիսիք երևան են հանվել Բագուի նաւթարդիւնաբերողների համագումարի խորհրդի վերաստուգիչ յանձնաժողովում։

◆ Բագուի փոխ-նահանգապետ Կուլիբինը առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Կօլօմինի հետ միասին մեկնեց Լէնքօրան՝ Լէնքօրանի քաղաքային ինքնավարութեան գործերը քննութեան ենթարկելու համար։ Նրա բացակայութեան ժամանակ փոխ-նահանգապետի պաշտօնը կը վարէ նահանգական վարչութեան գլխաւոր խորհրդատու կոմս Լէտօխօվսկին։

◆ Մի քանի մանրամասնութիւններ ձիաքարշի գործադուլի մասին, որը արդէն սկսել է գործել։ Ոմն Լ. Սէլչէնկօ, որ գնանալու էր Անդրկասպեան երկիրը, նստում է վագօն Միքայէլեան այգու մօտ և հանում է քսակը՝ տոմսակի գինը վճարելու։ Այդ պահին անյայտի մէկը, որ նոյնպէս նստած է լինում միևնոյն վագօնում, բռնում է նրա ձեռքերից, իսկ միւս ընկերը խլում է քսակը, որի մէջ լինում է 85 ր., և դիմում է փախուստի։ Սէլչէնկօն սկսում է աղաղակել և օգնութեան կանչել կօնդուկտոր Գուրեեվին՝ օգնել բռնելու գողերին, և հէնց այն էր կօնդուկտորը բռնում է մէկին, սա թողնում է քսակը նրա ձեռքում, իսկ ինքը շարունակում փախչել։ Կօնդուկտորին, իբրև կողոպտմանը մասնակցող, ոստիկանութիւնը ձերբակալում է, որը և առիթ է տալիս ձիաքարշի ծառայողներին գործադուլ անել, որը տևեց մինչև փետրվարի 4-ի երեկոն։ Կօնդուկտորի մասնակցութիւնը կողոպտման գործին չէ հաստատվում և միջնադէպը վերջանում է։

◆ Բագուի քաղաքապետ Ֆօլբաումը կարգադրել է, 1) որ զէնք ստացողները պէտք է ներկայացնեն իրանց լուսանկարները. 2) քաղաքում ոչ ոքի հրացան կրելու իրաւունք չը տալ։

◆ Նաւթարդիւնաբերողների համագումարի խորհուրդը տեղեկացրել է քաղաքապետին, որ Բալախանի և Բիբի-Հէյբաթի նաւթահանքերում տիրում է սոսկալի հակաողջապահական դրութիւն։ Գ.-մ. Ֆօլբաումը առաջարկել է Բալախանի-Սաբունչու և Բագուի ոստիկանապետներին՝ յատուկ ուշադրութիւն դարձնել այդ հանգամանքի վրա և անմիջապէս մաքրել տալ նաւթահանքերը։

◆ Ֆինանսական մասնաժողովը արդէն վերջացրել է, առանց դեֆիցիտի, քննել Բագու քաղաքի բիւջէտը։ Մասնաժողովը կրճատել է ծախսերից մի քանիսը, իսկ եկամուտների ցուցակում մտցրել է անցեալ տարվայ քաղաքին հասանելիք պարտքերը։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալցխա, 22 յունվարի

Պատւական «Մշակի» այս տարվայ 9-րդ համարում տպված պ. Ա. Սիմէօնեանի Արմաւիրից գրած նամակը դրդում է ինձ մի երկու խօսքով պարզել իրողութիւնը։ 1895 թւականին Ախալցխայի հայ կինն ևս ոգևորված կամենում էր մի գեղեցիկ գործով յաւերժացնել իր շրջանում հայոց հայրապետ՝ Խրիմեան Հայրիկի մուտքը Ախալցխա։ Ահա այդ նպատակով հաւաքվում են մի խումբ կանայք և որոշում ձեռնարկել հանգանակութեան կանանց մէջ՝ և, ի կատար ածելու համար այդ որոշումը, հրաւիրվում է կանանցից բաղկացած մի բազմամարդ ժողով, ուր և ընդունելով ժողովարարութեան ձեռնարկելու առաջարկը՝ վճռվում է միաձայն ժողովելիք գումարի տոկոսիքով կրթել սանուհիներ Հայրիկի անունով, եթէ ոչ միջնակարգ, գէթ տեղական դպրոցում, ինչպէս այդ շեշտված է այն ճառի մէջ, որ կարդաց օր. Թ. Մամիկոնեան՝ հայրապետին ներկայացած կանանց կողմից։ (Տես «Արձագանք» 1895 թ. № 78)։

Այդ իսկ բազմամարդ ժողովում ընտրվում են խմբեր, որոնց և յանձնվում հանգանակութեան գործը, որի արդիւնքը լինում է 324 ր., և ոչ 500, ինչպէս գրում է պ. Սիմէօնեան։

Ժողովարարութիւնը կատարված է խմբերի ձեռքով, և շատերի գիտութեամբ հաւաքված գումարը դրված է տեղիս յայտնի վաճառական պ. Կ. Մարուքեանի մօտ շահեցութեան։ Պարտամուրհակը գրված է տ. տ. Սիմէօնեանի, Յակոբջանեանի, Գնունիի, Ղասաբբաշեանի և Զաթալբաշեանի անուններով։ Պարտամուրհակը ընդհանուրի գիտութեամբ և համաձայնութեամբ մինչև այսօր պահվում է տ. Զաթալբաշեանի մօտ։ Երեք հարիւր քսան և չորս րուբլի դրամագլուխը տոկոսով միասին այժմ հասած է եօթն հարիւր րուբլու։

Պ. Ա. Սիմէօնեան ի զուր է կասկածում, որ հինգ անձնաւորութեան անունով գրված պարտամուրհակը կարող է կորստեան մատնվել. եթէ պարտամուրհակ ստացողներից երկուսը վախճանված են, երեքը դեռ կենդանի են։ Դժբաղդ դէպքում անգամ, պարտամուրհակը չէր կարող կորչել, որին երաշխաւորում է նախ՝ պարտամուրհակ տուողի ազնուութիւնը և երկրորդ՝ նուիրատու և գործակից կանանց շատ լաւ յայտնի լինելը պարտամուրհակի տեղը։ Ի վերջոյ այսպէս թէ այնպէս պ. Ա. Սիմէօնեան թող միանգամայն հանգիստ լինի դրամի ամբողջութեան և ապահովութեան համար։ Տեղիս կանանց համար ամենևին կարիք չը կայ յիշեալ գումարը յանձնել այս կամ այն հաստատութեանը, որոնց թւում է պ. Սիմէօնեան։ Մանաւանդ որ այժմ այստեղ գոյութիւն ունի «Հայ կանանց բարեգործական ընկերութիւն», օրինաւորապէս հաստատված կառավարութիւնից, որը և առնում է իր տրամադրութեան տակ յիշեալ գումարը գործադրելու այն նպատակին, ինչի համար որ հանգանակված է, այսինքն՝ սանուհիներ պահել տեղական իգական դպրոցում Հայրիկի անունով։

Ի դէպ հարկաւոր եմ համարում աւելացնել, որ յիշեալ բարեգործական ընկերութեան նախաձեռնութեամբ անցեալ տարվայ նոյեմբերի սկիզբներին նոյն նպատակի համար հանգանակվել է դարձեալ կանանց մէջ 124 ր. անմոռանալի Հայրիկի յիշատակին։

Եղիսաբէթ Զաթալբաշեան

ՄԱՄՈՒԼ

«Մշակի» № 29-րդում մենք առաջ բերինք «Жизнь» շաբաթաթերթի կարծիքը «Մշակի» մասին, իսկ այսօր մենք բերում ենք նոյն շաբաթաթերթի կարծիքը «Դաշնակցութեան» մասին։

«Խրիմեան կաթողիկոսի մահը,—ասում է յօդուածագիր պ. Արդարը,—բաժանեց հայ հասարակութիւնը երկու խոշոր խմբակցութիւնների։ Բնակչութեան մի մասը ակտիվ մասնակցութիւն ունեցաւ կաթողիկոսի թաղմանը, իսկ միւս մասը բոլորովին ձեռնպահ մնաց։ Առաջին խմբակցութեանը պատկանում էին կղերականները («Հովիւ»), ազգային լիբերալները («Մշակ») և դաշնակցականները։ Մնացեալ կուսակցութիւնները (սօց.-դեմօկրատները, հնչակեանները և հայկական էս-էրական կազմակերպութիւնները, որոնց ներկայացուցիչն է պ. Բէխարը), սկզբունքային տեսակէտներով ղեկավարվելով հրաժարվեցին «գնալ Էջմիածին»։

«Շուտով տեղի պիտի ունենան նոր կաթողիկոսի ընտրութիւնները։ Եւ կուսակցութիւնները նորից պէտք է վերաքննեն իրանց վերաբերմունքը դէպի Էջմիածին։ Մասնակցե՞լ արդեօք ընտրութիւններին թէ՞ ոչ. այսպէս է իրական կեանքի կողմից դրված հարցը։

«Այդ հարցին համարեա թէ բոլոր կուսակցութիւնները արդէն որոշ պատասխան տուել են։

«Կղերականներն ու ազգային-լիբերալները արդէն պատրաստվում են ընտրութիւններին։

«Դա շատ բնական է։ Կղերականները իրանց արիւնով ու կաշվով շահագրգռված են, որ Էջմիածինը ծաղկի, որ ընտրութիւնները բաղդաւոր ելք ունենան։ Դա գրպանի ու փորի հարց է։ Ազգային-լիբերալները այդ գռեհիկ դասակարգային բնազդումներից զուրկ են։ Նրանք աւելի շուտ ղեկավարվում են այն ցնորամիտ ու դատարկ գաղափարով, թէ պէտք է տէրտէրների ու վարդապետների բարոյական ոյժն ու ազդեցութիւնը բարձրացնել։

«Այդ դատարկ գաղափարներից ու կաշուե բնազդներից միանգամայն զուրկ են ձախակողմեան խմբակցութիւնները՝ սօց.-դեմօկրատները, հնչակեանները և էս-էրները։ Այդ խմբակցութիւնները Էջմիածնից սպասելիքներ չունենք։ Դրանց դիրքը շատ պարզ է։ Եւ այդ դիրքի անունն է բօյկօտ։

«Մնում է այն խմբակցութիւնը, որը կամ դեռ չէ որոշել իր դիրքը դէպի Էջմիածինն ու դէպի գալիք ընտրութիւնները, կամ թէ արդէն որոշել է, բայց աշխատում է մի առ ժամանակ ծածկել իր որոշումը։ Մեր խօսքը դաշնակցականների մասին է։ Պիտի մասնակցէ՞ն արդեօք նրանք ընտրութիւններին թէ՞ ոչ։ Այս հարցով վերջերս նրանց դիմեց «Մշակը»։

«Եւ այս հարցը չէ կարելի լռութեամբ անցնել։ Նրան պէտք է որոշել այս կամ այն մտքով և այդ որոշումը պէտք է յայտնել ի գիտութիւն ամենքի։

«Մենք հասկանում ենք դաշնակցականութեան հոգու մէջ կատարվող ողբերգութիւնը, բայց չենք հասկանում դաշնակցականների երերումներն ու սպասողական դրութիւնը։ Կուսակցութիւնը երկու ճանապարհների մէջտեղումն է կանգնած։ Նա պիտի գնայ կամ ձախ կամ աջ—կամ դէպի տէրտէրները և կամ դէպի դեմօկրատները։

«Այդ հարցը որոշելու ժամանակ երկու տեսակ դժուարութիւններ են առաջանում—նիւթական և գաղափարական։

«Այդ հարցի նիւթական կողմը այն անհերքելի փաստի մէջ է կայանում, որ դաշնակցական մասսաների ճնշիչ մեծամասնութիւնը դեռ ևս ոչ հրաժարվել է թէօլօգիական ձևով մտածելու եղանակից և ոչ էլ կարել է իր կապերը Էջմիածնից։ Լուսաւորչական եկեղեցին այդ մասսաների համար նոյնչափ սուրբ է, որչափ և ազգային գաղափարը։ Բոլորովին տարբեր տրամադրութիւն ենք մենք նկատում այդ կուսակցութեան ինտելիգենտ շրջաններում, մանաւանդ նրա երիտասարդութեան մէջ, որը աչքի է ընկնում իր կրօնական անտարբերութեամբ։ Ո՞ր մէկի տրամադրութիւնը զոհ բերել. մասսաների՞ արդեօք, թէ՞ արմատական երիտասարդութեան։ Եթէ կուսակցութիւնը բօյկօտի կենթարկի ընտրութիւնները, նրանից կը սառչեն կրօնապէս տրամադրված մասսաները. իսկ եթէ կուսակցութիւնը ընտրողական պայքարի մէջ կը նետվի, այն ժամանակ նրանից կանջատվեն դժգոհ ձախակողմեան տարրերը։

«Հարցի իդէալական տարրը կայանում է եկեղեցու և ազգութեան գաղափարական նմանողութեան մէջ։ Այդ նմանողութիւնը հասարակ ժողովրդի մէջ արտայայտվում է շատ պարզ և գռեհիկ ձևով։ Ռուս ժողովրդի ահագին մեծամասնութեան համար «ռուս և ուղղափառ» խօսքերը հոմանիշներ են։ «Ջհուդ» և «գեաւուր» հասկացողութիւնները միաժամանակ և կրօնական տարբերութիւնն են արտայայտում։

«Բայց և ինտելիգենտ, լիբերալ տրամադրված նացիօնալիստներն էլ բոլորովին ազատ չեն այդ կրօնական համակրութիւններից։ Սլավեանօֆիլները շարունակ ուղղափառ եկեղեցին վերածնելու մասին էին մտածում, վրացի ֆեդերալիստները ահագին նշանակութիւն են տալիս մայրենի եկեղեցու ինքնագլուխ լինելու անարժէք գաղափարին։

«Այս հոգեբանութիւնը մեծ չափով յատուկ է և հայ դաշնակցականներին։ Նրանց մէջ մենք բազմատեսակ վերաբերմունքներ ենք նկատում դէպի Էջմիածինը։ Գօլիցինի ժամանակ նրանք հոգևորականութեան հետ միացած լուսաւորչական եկեղեցու իրաւունքներն էին պաշտպանում. մի տարի առաջ պ. Ահ-եանը մի ինչ-որ եպիսկոպոսի հետ Հաագա գնաց Թիւրքիայի հայերի շահերը պաշտպանելու համար։ Դեռ վերջերս դաշնակցականները ընդհանուր ազգային մանիֆեստացիա սարքեցին ի նպաստ հանգուցեալ Խրիմեանի, և այլն և այլն։ Ընդհանրապէս, պէտք է նկատել, որ այդ կուսակցութեան ղեկավարները, մեծ մասամբ անտարբեր մարդիկ լինելով հանդէպ դէպի կրօնը, եկեղեցով օգտվում էին մասամբ ազգային շահերի տեսակէտից, մասամբ էլ կուսակցական շահերի տեսակէտից։

«Առաջիկայ ընտրութիւնները, այսպիսով, կուսակցութեան առաջ մի այսպիսի դիլեմմա են դնում. ընտրութիւններին մասնակցելով նրանք կորցնում են իրանց արմատական երիտասարդութեան և բոլոր ձախակողմեան կուսակցութիւնների համակրանքը։ Իսկ ընտրութիւնները բօյկօտի ենթարկելը Դաշնակցութիւնից յետ կը մղի նրա տգէտ մասսաներին և կը զրկի կուսակցութեանը եկեղեցին շահագործելու հնարաւորութիւնից։

«Ահա թէ ինչու այդ կուսակցութեան ղեկավարները մեծ անորոշութեան մէջ են գտնվում և չը գիտեն ո՛ր կողմը գնալ։ Թէ որ ձախ գնայ—ձի՛ն կը կորցնի, իսկ թէ աջ գնայ—ի՛նքը կը կորչի։

«Երկու ամիս առաջ նրանք, կարծես թէ, ընտրութիւններին մասնակցելու կողմնակից էին։ Այդ երևում էր սկզբունքով ընտրութիւններին մասնակցելու հակառակ պ. Wild-ի դէմ մղած դաշնակցականների բանակռուից։

«Դրանից յետոյ պէտք է ենթադրել, որ նրանց տրամադրութիւնը փոխվել է։ Կուսակցութեան մէջ ոմանք ընտրութիւններին մասնակցելու կողմն են, իսկ միւսները հակառակ են։ Բայց ո՞րն է կուսակցութեան ընդհանուր, բոլորի համար էլ պարտաւորեցուցիչ որոշումը,—այդ մենք չը գիտենք։

«Մեր կողմից կը ցանկանայինք նկատել և հետևեալ կէտը։ Կուսակցութեան ղեկավարները, գուցէ, կը ցանկանան թէև հմայիչ, բայց շատ սխալ տակտիկան գործ դնել։ Նրանց, գուցէ, տակտիկայի տեսակէտից շատ յարմար կը թւայ այդ խնդրին մեծ նշանակութիւն տալուց հրաժարվել և թոյլ տալ, որ կուսակցութեան իւրաքանչիւր անդամը ազատ կերպով վարվի, ինչպէս որ ինքը կը ցանկանայ։ Նրանք այդպիսով կօնֆլիկտի առաջը առած կը լինեն, կուսակցութեան մէջ եղած տարբեր հոսանքների միջև համաձայնութիւնը կը պահպանեն և իրանց չեն կաշկանդի գործունէութեան որոշ ձևով։

«Բայց դա հարցի լուծումը չի լինի, այլ մի շատ կարևոր խնդրի լուծումից հրաժարվելը կը լինի։ Կուսակցութիւնը պէտք է իր որոշ, պարզ ու դրական խօսքը ասի։ Չէ կարելի, տակտիքական տեսակէտներից ղեկավարվելով, հրաժարվել այնպիսի սկզբունքային խնդիրների լուծումից, որոնց առաջացնողը հէնց ինքը կեանքն է։ Ընտրութիւններին չեզոք վերաբերվելը, ամեն մէկին ընտրութիւններին մասնակցելու կամ չը մասնակցելու իրաւունք տալը ձախակողմեան խմբակցութիւնների կողմից կը հասկացվի այն մտքով, որ Դաշնակցութիւնը, զիջանելով բոպէի պահանջին և յետամնաց մասսաների տրամադրութեանը, կողմնակի կերպով մասնակցում է ընտրութիւններին։

«Կուսակցութիւնը կամ պէտք է մասնակցի ընտրութիւններին, կամ թէ պէտք է բօյկօտի ենթարկի նրանց։

«Մենք Դաշնակցութեան որոշումին ենք սպասում»։

Հաւատացած ենք, որ թէ պ. Արգարը և թէ «Жизнь» թերթը շատ երկար կը սպասեն Դաշնակցութեան որոշ պատասխանին։ Վերոգրեալ ձևով Դաշնակցութեան հոգեբանութիւնը լաւ ճանաչելուց յետոյ, միթէ աւելորդ չէ՞ այդ quasi-կուսակցութիւնից որոշ պատասխաններ սպասելը, մանաւանդ սկզբունքային հարցերի վերաբերեալ։ Բայց սկզբունքային լուրջ հարցերի վերաբերեալ լուրջ ու պարզ կերպով պատասխանելը նրանց դաւթարից բոլորովին դուրս է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՆՑՔԵՐԻՑ

VII *)

Դէպքերը Պարսկաստանում

Թաւրիզ, 26 յունվարի

Դեկտեմբերի 21-ին, երեկոյեան ժամ $2^1/_2$-ին, Ֆարման-Ֆարման Միանդաբում ունեցած իր բանակից երկու գունդ զինուոր ճանապարհեց Սօվուջ-Բուլաղի ճանապարհի վրա գտնվող Ամիրաբատ գիւղը, որ երկու մղոն հեռու է գտնվում Միանդաբից։ Միևնոյն ժամանակ կարգադրվում է, որ 4 թնդանօթ և 200 հոգի թնդանօթաձիգ ու զինուորներ գնան Քէօհնա-Միանդաբ, որպէս զի գիշերն այնտեղ հանգստանան և առաւօտեան միանան Ֆարման-Ֆարմայի հեծելազօրի հետ ու միասին ճանապարհվեն դէպի Սօվուջ-Բուլաղ։ Պարսից ընդհ. հրամանատարը իր մօտ գտնվող պաշտօնեաներին հրամայում է միևնոյն ժամանակ, որ առաւօտեան ժամ 6-ին պատրաստ լինեն ամբողջ կազմով ճանապարհվելու դէպի Սօվուջ-Բուլաղ։ Նոյն օրը երեկոյեան ժամ 8-ին Միանդաբ են գալիս մի քանի ձիաւորներ և Ֆարման-Ֆարմային հաղորդում, որ Իբրահիմ աղայի որդիքն իրանց քիւրդ աւազակային խմբով Ամիրաբատի մօտ դիրք բռնած՝ պարսից զօրքի վրա գնդակներ են արձակում, իսկ զօրքն էլ ստիպված է լինում պատասխանել նոյնպէս հրաձգութեամբ։

Ֆարման-Ֆարման այդ լուրն առնելուն պէս իր հեծելազօրով ճանապարհվեց դէպի Ամիրաբատ։ Քիւրդերը, տեսնելով պարսիկ ձիաւորների գալը, իրանց դիրքերը թողել փախել են։ Ֆարման-Ֆարման, գիշերն Ամիրաբատում մնալով, դեկտեմբերի 22-ի առաւօտեան ժամը 6-ին իր բանակով ճանապարհվել է և ժամը 11-ի մօտ հասել Սօվուջ-Բուլաղ, ուր դիմաւորելու էր դուրս եկել քաղաքի ամբողջ արական բնակչութիւնն՝ իրան գլուխ ունենալով շէյխ-իւլ-իսլամին և ղազիներին։ Ժողովուրդը Ֆարման-Ֆարմային բարի գալուստ մաղթեց և իր հաւատարիմ հպատակութիւնը յայտնեց։ Ընդհ. հրամանատարն էլ իր կողմից ժողովրդի դրութեան մասին հարցրեց ու մի քանի սիրալիր խօսքեր ուղղեց ամբոխին։ Նոյն օրը, դեկտեմբերի 22-ին, երեկոյեան ժամը 4-ին, շէյխ-իւլ-իսլամը, ղազիների և քաղաքի երևելիների ընկերակցութեամբ, նորից ներկայացել է Ֆարման-Ֆարմային և երդումներով հաւատացրել, որ իրանք Իրանի հլու հպատակներն են և ըստ պահանջման հարկին կապացուցանեն այդ՝ իրանց արիւնը թափելով։ Ֆարման-Ֆարման պատասխանել է, թէ երդուելու կարիք չը կայ, ինքը հասկանում է, որ այս բոլոր շարժումների միակ պատճառը Բայազիտ աղան է, որ սկզբից իսկ և եթ ցանկացել է երկու հարևան իսլամ պետութիւնների միջև կօնֆլիկտ առաջացնել՝ իր մասնաւոր հաշիւները կարգադրելու ցանկութեամբ։ Ֆարման-Ֆարմայի մօտ այցելութեան եկողները սիրալիր ընդունելութիւն են գտնում, հիւրասիրվում թէյով, ղալյանով ու չիբուխով և գոհ սրտով վերադառնում իրանց տները։

Դեկտեմբերի 23-ին Ֆարման-Ֆարման իր հետ բերած հեռագրական ծառայողներին ուղարկեց՝ Սօվուջ-Բուլաղի և Միանդաբի միջև կտրված հեռագրաթելերը շուտով ուղղելու, որպէս զի հնար լինի Թէհրանի և Թաւրիզի հետ յարաբերութիւն պահպանել։ Նոյն օրը անձամբ գնաց Սօվուջ-Բուլաղի զօրանոցը, ռազմամթերանոցն ու պետական այլ հաստատութիւններ՝ քննելու նպատակով։ Նորին բարձրութիւնն իր ցաւը յայտնեց, որ այդ հաստատութիւններն անխնամ մնալով անկանոն վիճակի են ենթարկվել, և հրամայեց, որ հարկաւոր ու անհրաժեշտ նորոգութիւններին անմիջապէս ձեռնարկվի, որպէս զի զինուորները գոնէ գիշերները ցրտից չը նեղվեն. միևնոյն ժամանակ կարգադրեց, որ ձիաւոր ու հետևակ զօրքի ռոճիկը ժամանակին ու կանոնաւոր կերպով տրվի։

Y.

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնազուրկ է լինում Կուբանեան շրջանի կառավարիչ և Կուբանի կօզակային զօրքի նակազնօյ ատաման գեն.-լէյտ. Միխայլօվ։ Կարսի շրջանի զինուորական նահանգապետ Բաբիչին հրամայված է լինել Կուբանի շրջանի կառավարիչ և Կուբանի կօզակային զօրքի նակազնօյ ատաման։

ՕԴԵՍՍԱ։ Գեներալ-նահանգապետի նախագահութեամբ կազմված է մի յանձնաժողով՝ կողոպտումների և դրամաշորթութիւնների դէմ կռիւ մղելու համար։ Յանձնաժողովի կազմի մէջ մտել են քաղաքի, վաճառականութեան, վարկային և դասային հաստատութիւնների և հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչները։ Մատնանշված են մի շարք միջոցներ։

ՊԱՐԻԶ։ Պալատը վերջացրեց եկամտային հարկի հարցի շուրջը պտտող վիճաբանութիւնները և 487 ձայնով ընդդէմ 56-ի որոշեց դիմել յօդուածային քննութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սենատի քրէական վճռաբեկ դեպարտամենտի դատաստանական ատեանում սկսվեց Քութայիսի նահանգական ազնուականութեան պարագլուխ Ծերեթելու, Քութայիսի ժողովարանի պատգամաւորներ՝ Մաչավարիանու և Էրիստովի, քարտուղար Գամրեկէլու և միւսների գործի քննութիւնը, որոնք մեղադրվում են մի շարք յանցանքների մէջ, որ գործել են իրանց պաշտօնավարութեան ժամանակ։ Այսպէս՝ օրինակ՝ յիշեալ անձինք ազնուականութեան կոչում են տուել կեղծ փաստաթղթեր ներկայացնող շատ-շատերի։ Այդպիսի կեղծիքների թիւը հասնում է 58-ի։ Նախագահում է սենատոր Վարվարին. դասակարգային ներկայացուցիչներն են՝ Մոսկվայի քաղաքագլուխ Գուչկով, Սմոլենսկի ազն. պարագլուխ իշխան Ուրուսով, Լուգայի պարագ. Տիրան, Պետերբուրգի գաւառի տանուտէր Ֆէօդորով։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

---

*) Տես «Մշակ» № 29.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿ. ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

(Նշանակված են Թիֆլիսի ժամերով)

Թիֆլիսից Բագու		Բագուից Թիֆլիս	
Արագ. գիշ.	12 ժ. 28 ր.	Արագ. երեկ.	5 ժ. 02 ր.
Փոստ. երեկ.	9 ժ. 41 ր.	Փոստ. ցեր.	12 ժ. 21 ր.
Մարդ. առաւ.	7 ժ. 53 ր.	Մարդ. առաւ.	4 ժ. 58 ր.
Թիֆլիսից Բաթում		Բաթումից Թիֆլիս	
Մարդ. առաւ.	10 ժ. 58 ր.	Մարդ. առաւ.	10 ժ. 38 ր.
Փոստ. առաւ.	9 ժ. 15 ր.	Փոստ. առաւ.	6 ժ. 49 ր.
Մարդ. երեկ.	11 ժ. 22 ր.	Մարդ. երեկ.	5 ժ. 46 ր.
Թիֆլիսից Երեւան		Երեւանից Թիֆլիս	
Փոստ. գիշ.	1 ժ. 8 ր.	Փոստ. ցերեկ.	1 ժ. 18 ր.
Մ.-ապր. ցեր.	3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ա.գ.	12 ժ. 52 ր.
Կարսից. Ալէքսանդ.		Ալէքսանդր. Կարս	
Փոստ. երեկ.	5 ժ. 48 ր.	Փոստ. ցերեկ.	12 ժ. 23 ր.
*)Մ.-ապր. առ.	5 ժ. 25 ր.	*)Մ.-ապր. գիշ.	3 ժ. 09 ր.
Թիֆլիսից Ջուլֆա		Ջուլֆայից Թիֆլիս	
Փոստ. գիշ.	1 ժ. 08 ր.	Փոստ. գիշ.	6 ժ. 48 ր.
Մ.-ապր. ցեր.	3 ժ. 16 ր.	Մ.-ապր. ցեր.	6 ժ. 54 ր.

*) Այս գնացքները երթևեկում են միայն պէտք եղած ժամանակ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9^1/_2$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ե. Կ. ԽՕԴՆԵՎԱ—$9^1/_2$—2 ժ. ատամի հիւ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—$1^1/_2$—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—11—12 ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Ա. Ամիրխանեան
ՆԵՐՔԻՆ
Հիւանդութիւններ
Ընդունելութիւն 10—12 ժ. առաւօտեան
6—7 ժ. երեկոյեան
Րտիշչեվսկայա փող. № 22.
(ա. օ.) 10—5

ՀՐԱՒԷՐ

Ջրկինեանց ս. Կարապետ եկեղեցու երեսփոխանի եռամեայ շրջանը լրացած լինելու պատճառով՝ ներկայ տարու փետրվարի 10 ին, կիրակի. պատարագից յետոյ, ժամը 12-ին, նոր երեսփոխան ընտրելու համար լինելու է ծխականների երկրորդ ժողով։ Ուստի սրանով հրաւիրում եմ յիշեալ եկեղեցու 21 տարին լրացածներից սկսած՝ երկսեռ բոլոր ծխերին, որ յիշեալ օրն և ժամին շտապեն եկեղեցի՝ ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ ա. մասի՝
Գրիգոր աւ. քահ. Մանդակունի
(ու. շ.) 2—2

ԱՎՍԱՐԳԻՍՕՎԻ
այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և կովկասեան տեսակի մրգատու ծառեր։ Կայարան ՍԿՐԱ, Անդրկով. երկ., Ավսարգիսօվին։ Կատալօգը ուղարկվում է
ՁՐԻ
(ե. հ. շ.) 15—7

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
գրավաճառանոցում վաճառվում է
Յ. Դաղբաշեանի
ԸՆԴԱՐՁԱԿ
ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՀԱՅԵՐԷՆ
Բառարանը
ԳԻՆՆ Է 8 ՌՈՒԲԼԻ
Կազմած՝ 8 ր. 50 կ., 9 ր. և 9 ր. 50 կ.։
Գումարով գնողներին բաւարար զեղչ։ 5—3

Թիֆլիս Քաղաքի Վաճառականների Փոխադարձ Օգնութեան Ընկերութեան Վարչութիւնը

տեղեկացնում է ընկերութեան պ.պ. անդամներին, որ փետրվարի 3-ին չը կայացած ընդհանուր ժողովի փոխարէն, կանոնադրութեան 36-րդ կէտի համաձայն, ընդհանուր ժողովը յետաձգվում է փետրվարի 10-ին, Թիֆլիսի բօրսայի շինութեան մէջ, առաւօտեան ժամը 11-ին։ Պարապմունքի առարկաներն են. Վարչութեան զեկուցումը՝ Խօսրօյեվի քարվանսարայի հրկիզեալներին օգնելու մասին, և հերթական գործեր։

Ընդհանուր ժողովը կանոնադրութեան 36-րդ կէտի ույժով օրինաւոր կայացած կը համարվի, որքան էլ որ անդամ ներկայ լինի։

Խնդրվում է մտնելիս ներկայացնել անդամութեան տոմսերը։

(ու. կ.) 2—1

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
ԿՕՇԿԵՂԷՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.
Ամեն տեսակ մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։



ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ
Իսկականը այս կլէյմօն ունի իր վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
ՌԻԳԱՅՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ
ԽԱՐԿՕՎՈՒՄ
ՕԴԵՍՍԱՅՈՒՄ
ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ
ԿԱԶԱՆՈՒՄ
ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՏԱՇԿԷՆՏՈՒՄ

ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԷՕՊՕԼԴ ՆԵՅՇԵԼԼԵՐ“
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
Նիժէգօրօդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում
ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ
ԱՅԴՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկեան ռետին. մանուֆակտուրայի ընկերութեան
Կրեմ եւ Ապրետուրա կօշկեղէնի համար
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ. (հ. կ.) 100—1

Электропечатня «ЭКОНОМІЯ» Авакъ Мурдусіавоповъ съ С-ми.
Большая Ванкская ул. д. Семинаріи № 3.